



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 35

«22» 03 2022 թ.

ք. Երևան

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՊՕՐԻՆԻ
ՀԱՐՍԱՑՄԱՆ, ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակառուպցիոն ուղղվածության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 34-րդ կետը և ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝


1. Հաստատել կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության առանձնահատկությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:
3. Հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության

բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիա:

Ա.ԴԱՎԹՅԱՆ



A handwritten signature in black ink, appearing to read 'A. Davtyan', is written over a horizontal line. The signature is fluid and cursive.



**Կոռուպցիոն հանցագործությունների, այդ
թվում՝ ապօրինի հարստացման, քննության
առանձնահատկությունները
(Մեթոդական ուղեցույց)**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
§ 1. Կոռուպցիոն հանցագործությունների էությունը և դրանց կանխարգելման իրավական հիմքերը.....	7
§ 1.1. Կոռուպցիայի հակազդման իրավական և կազմակերպական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում.....	7
§ 1.2. Կոռուպցիոն հանցագործությունների էությունը և տարանջատման չափանիշները Հայաստանի Հանրապետությունում.. ..	14
§ 2. Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերը.....	16
§ 2.1. Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը.....	16
§ 2.2. Կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը.....	23

ԳԼՈՒԽ 2

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՄԱՆ ՀԱՆՑԱՏԵՍԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԷՌԻԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Ապօրինի հարստացման հանցատեսակի ծագումը, զարգացումը և միջազգային փորձը.....	26
§ 2. Ապօրինի հարստացման էությունը, իրավական հիմքերը և առանձնահատկությունները.....	28

ԳԼՈՒԽ 3

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

§ 1. Կոռուպցիոն հանցագործությունների գործերով պարզաբանման ենթակա ընդհանուր հանգամանքները	32
§ 2. Կոռուպցիոն հանցագործությունների քննության սկզբնական փուլի առանձնահատկությունները	37

§ 3. Քննության հետագա փուլի քրեադատավարական և կրիմինալիստիկական առանձնահատկությունները40

ԳԼՈՒԽ 4

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Փաստաթղթերի հետ տարվող աշխատանքը..... 44

§ 2. Վկաների հարցաքննությունը 46

§ 3. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության առանձնահատկությունները.... 48

§ 4. Առերեսման առանձնահատկությունները49

§5. Խուզարկության կատարման առանձնահատկությունները.....51

§6. Կոռուպցիոն հանցագործությունների գործերով նշանակվող փորձաքննությունները.....54

§6.1. Դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական փորձաքննություններ54

§6.2. Դատաֆինանսատնտեսագիտական /հաշվապահական/ փորձաքննություն...57

§6.3. Դատաշինարարատեխնիկական փորձաքննություն.....59

§6.4 Կոռուպցիոն հանցագործությունների գործերով նշանակվող այլ փորձաքննություններ..... 62

ԳԼՈՒԽ 1

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կոռուպցիա» հասկացությունն այնքան հին է, որքան մարդկային քաղաքակրթությունը:

«Կոռուպցիա» երևույթին մշտապես անդրադարձել են տարբեր ժամանակների մտածողներ՝ փորձելով տալ դրա հստակ սահմանումը, դրսևորման եղանակները, առանձնահատկությունները և կոռուպցիայի դեմ պայքարի հնարավոր արդյունավետ միջոցները:

Կոռուպցիայի առկայությունն ուղղակիորեն բացասական ազդեցություն է թողնում պետության կայուն զարգացման գործընթացի վրա, խարխլում է պետության կազմակերպարավական հիմքերը: Ուստի կոռուպցիայի առկայությունն իրավացիորեն պետք է համարել քաղաքակիրթ մարդկության առջև ծառայած լրջագույն մարտահրավերներից, ինչով էլ պայմանավորված՝ աշխարհի առաջադեմ պետությունների կողմից ամենօրյա պայքար է մղվում երևույթն արմատախիլ անելու և դրա հետևանքով վրա հասած հետևանքները չեզոքացնելու ուղղությամբ: Այդ առումով կարևոր է նախևառաջ հասկանալ «Կոռուպցիա» երևույթի ծագումնաբանությունը, էությունը, դրսևորման առանձնահատկությունները, ինչպես նաև տարբերակել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների տարանջատման չափանիշները, ինչը թույլ կտա առավել գործուն մեխանիզմներ սահմանել ինչպես երևույթի, այնպես էլ դրա առանձին դրսևորումների՝ տվյալ դեպքում կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում:

Հարկ է նշել, որ «կոռուպցիա» եզրույթը տարբեր հեղինակների կողմից մեկնաբանվել և մեկնաբանվում է յուրովի, թեև դրանցում առկա են որոշակի օրինաչափություններ և բնութագրման որոշակի ընդհանրական գծեր: Ըստ «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանի տվյալների՝ «կոռուպցիա» տերմինն առաջացել է լատիներեն «corruptus» և «corrumpere» բառերից, որոնք նշանակում են փչացում, այլասերում, վարակում, ապականում, աղճատում, աղավաղում, կաշառում և այլն:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության սահմանման համաձայն՝ կոռուպցիան ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է՝ անձնական օգուտ ստանալու նպատակով:

Ըստ Օքսֆորդի ընդարձակ բառարանի՝ «կոռուպցիա» տերմինը նշանակում է պետական պարտականությունների կատարման ժամանակ կաշառքի և

հովանավորչության միջոցով ազնվության խեղաթյուրում և քայքայում, իշխանություն կրողի կողմից անազնիվ կամ խարդախ վարք:

Համաձայն «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա»-ի 2-րդ հոդվածի՝ «կոռուպցիա» նշանակում է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած պարտականության պատշաճ կատարումը, կամ պահանջվող վարքագիծը:

«Կոռուպցիա» հասկացությունը մի փոքր լայն համատեքստում է սահմանում ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված «Իրավապահ մարմինների աշխատակիցների վարքագծի մասին» օրենսգիրքը: Այն սահմանում է, որ չնայած «կոռուպցիա» հասկացությունը պետք է սահմանվի ազգային օրենսդրության համաձայն, սակայն հարկ է հասկանալ, որ այն ընդգրկում է պարտականությունների կիրառմամբ որևէ գործողության կատարում կամ դրա կատարումից ձեռնպահ մնալը, կամ այդ պարտականությունների կիրառմամբ որևէ բան պահանջելը, կամ նվերներ ընդունելը, որևէ խոստում տալը, կամ որևէ բան անօրինական ստանալը:

Կոռուպցիայի հակազդմանն ուղղված ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին 2019թ. համաձայնագրի համաձայն՝ կոռուպցիան բնորոշվում է որպես պաշտոնատար անձի կամ մասնակից պետությունների օրենսդրությամբ նրան հավասարեցված անձի կամ օտարերկրյա պաշտոնատար անձի կամ հրահանգչական և այլ կառավարչական գործառույթներ իրականացնող անձի, այդ թվում՝ առևտրային կամ այլ կազմակերպությունում, անձամբ կամ միջնորդների միջոցով իր, երրորդ անձի կամ կազմակերպության համար գործողության կամ անգործության դիմաց բարիքների դիտավորյալ անօրինական ստացում պաշտոնեական պարտականությունները կատարելիս, այն է՝ տվյալ անձանց կաշառում՝ բարիքներ տրամադրելու միջոցով:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ «կոռուպցիա» երևույթին անդրադարձ է կատարել Ա.Հ.Գաբուլյանն իր 2011թ. «Կրիմինոլոգիա» աշխատության մեջ, նշելով, որ կոռուպցիան իրավաբանական հասկացություն չէ և այդպիսի կոնկրետ հանցակազմ չկա: Վերջինս առանձնացնում է կոռուպցիայի լայն և նեղ հասկացություններ: Լայն իմաստով կոռուպցիան իր մեջ ընդգրկում է ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպություններում, այնպես էլ առևտրային կազմակերպություններում աշխատող ծառայողների կողմից իրենց ծառայողական կամ պաշտոնեական դիրքի ամեն տեսակի օգտագործումը անձնական կամ խմբային շահերի համար: Այս տեսակետից կոռուպցիայի դրսևորում են հանդիսանում ոչ միայն պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները, այլ նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող տնտեսական հանցագործությունները, հափշտակությունները, արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները, կառավարման կարգի դեմ ուղղված մի շարք հանցագործություններ և այլն: Նեղ

իմաստով կոռուպցիան իր մեջ ընդգրկում է հանցագործությունների այն դեպքերը, որոնք իրենցից գործարք են ներկայացնում: Ակնհայտ է, որ միևնույն հանցատեսակը կոնկրետ դեպքում կարող է հանդիսանալ լայն իմաստով կոռուպցիայի դրսևորում, իսկ մեկ այլ դեպքում՝ նեղ իմաստով կոռուպցիայի դրսևորում: Հեղինակի պնդմամբ կոռուպցիան սոցիալական երևույթ է, որն իր մեջ ընդգրկում է շեղվող վարքագծի տարբեր դրսևորումներ: Այս տեսակետից առանձնացվում են՝

1. կոռուպցիոն հանցագործություններ,
2. կոռուպցիայի հետ կապված հանցագործություններ,
3. կոռուպցիոն վարչական զանցանքներ,
4. կոռուպցիոն քաղաքացիաիրավական խախտումներ,
5. կոռուպցիոն կարգապահական զանցանքներ:

Միջազգային գիտական հանրության կողմից ևս ուսումնասիրության առարկա է դարձել «կոռուպցիա» երևույթը, ընդ որում հեղինակներից ոմանք /Վ.Վ.Լունեն, Պ.Ա.Չեբոկսարով և այլք/ նույնպես այն համարելով սոցիալական երևույթ, կոռուպցիան բնութագրում են որպես պետության և հասարակության մեջ որոշ բացասական երևույթների դրսևորում, որն հիմնականում արտահայտվում է որոշ պաշտոնյաների կողմից բարոյական նորմերի անտեսմամբ, պետական իշխանության, պետական ծառայության և տեղական ինքնակառավարման դեմ ոչ օրինական արարքներ կատարելով՝ եսասիրությունից և անձնական շահերից ելնելով, պետական իշխանության բոլոր ճյուղերում (պետական, համայնքային, մասնավոր), շահադիտական դրդապատճառներով կատարված չարաշահումները կամ կաշառք տալը:

Հարկ է նշել, որ առայժմ հետազոտողների մեծամասնության կարծիքով, որպես սոցիալական երևույթ, կոռուպցիայի բոլոր պահանջներին համապատասխանող ընդունելի սահմանում գոյություն չունի: Իրավաբանները կոռուպցիան սահմանում են որպես սոցիալական երևույթ, որը դրսևորվում է պետական և մունիցիպալ ծառայողների կամ այլ անձանց կողմից, որոնք լիազորված են կատարելու պետական գործառույթներ՝ ծառայողական դիրքի, կարգավիճակի կամ զբաղեցրած դիրքով պայմանավորված հեղինակության-վարկի կանխամտածված օգտագործմամբ շահադիտական նպատակներով անձնական /կամ/ և խմբային շահի համար:

Ամփոփելով կոռուպցիայի վերաբերյալ տարբեր կազմակերպությունների կողմից տրված սահմանումները, ինչպես նաև գիտական հանրույթի մեկնաբանությունների արդյունքում ձևավորված մոտեցումները, կարելի է եզրակացնել, որ կոռուպցիան ի պաշտոնե տրված կառավարչական, իշխանական լիազորությունների անձնական կամ այլ շահադիտական նպատակով չարաշահումն է, որն արտահայտվում է կատարման տարբեր ձևերով և եղանակներով:

§ 1. Կոռուպցիոն հանցագործությունների էությունը և դրանց կանխարգելման իրավական և կազմակերպական հիմքերը

§ 1.1. Կոռուպցիայի հակազդման իրավական և կազմակերպական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում

Ակնհայտ է, որ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար մղելու, այն նախականիսելու, լատենտայնությունը բացառելու և առկա ռիսկերը չեզոքացնելու համար անհրաժեշտ են համապատասխան գործիքակազմերի ներդրում և արդյունավետ իրացում: Այս առումով կոռուպցիայի հակազդման միջոցառումների առաջնահերթություններից պետք է համարել համապատասխան իրավական բազայի ստեղծումը և դրա վրա հիմնված արդյունավետ գործող մեխանիզմների գործարկումն ու կիրարկումը: Հայաստանի Հանրապետության կողմից նշված բնագավառում միջոցառումների իրականացումը սկսվել է բավականին վաղ անցյալում, սակայն առավել ակտիվություն նկատվել է հատկապես վերջին տարիներին, որոնց ընթացքում կոռուպցիայի հակազդման առումով մեր երկրում ստեղծվել են կազմակերպարավական անհրաժեշտ մեխանիզմներ: Պետք է նշել նաև, որ այդ ուղղությամբ միջոցառումները կրում են շարունակական բնույթ, նկատի ունենալով, որ կոռուպցիայի հակազդման դեմ միջոցառումների շրջանակը ենթակա է մշտական փոփոխության: Ինչպես բոլոր սոցիալական երևույթները, կոռուպցիան նույնպես հասարակական հարաբերությունների փոփոխություններին «հարմարվելու», դրանց զուգահեռ դրսևորման նորանոր արտահայտումներ ստանալու ունակություններ ունի: Հետևաբար կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ իրականացման նպատակով կարևոր նշանակություն ունի հատկապես միջազգային փորձի ուսումնասիրությունը և լավագույն փորձի ներդնումը համապատասխան օղակներում: Հայաստանի Հանրապետության կողմից կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք հիմնված են եղել և ներկայումս էլ հիմնված են միջազգային տարբեր կառույցների կողմից մշակված, միջազգային լայն հանրույթի կողմից ընդունված սկզբունքների, չափորոշիչների ներդրման և դրանց համատեքստում ներպետական օրենսդրության ընդունման կամ կատարելագործման վրա: Ուստի Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային մի շարք ակտերին միանալը կարևորագույն գործոն է հանդիսացել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ կազմակերպման և օրենսդրական դաշտի կարգավորման խնդրում: Այդ գործընթացում մեր պետությունը միացել է միջազգային կառույցների կողմից ընդունված հետևյալ փաստաթղթերին.

➤ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային /2005 թվականին Հայաստանը ստորագրել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, այն Հայաստանի ազգային ժողովը վավերացրել է 2006 թվականին: Կոնվենցիայի նպատակն է կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մեխանիզմների

ուժեղացումը, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի մղումը, պատժելիության սահմանումը, պատշաճ կառավարման հաստատումը/,

➤ 1996թ. ԵԽ նախարարների կոմիտեի կողմից ընդունված կոռուպցիայի դեմ գործողությունների ծրագրին,

➤ 1997 թ. հոկտեմբերի 10-11-ը Ստրասբուրգում կայացած ԵԽ անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթաժողովում ընդունված եզրափակիչ դեկլարացիային և գործողությունների ծրագրին,

➤ 1997 թ. նոյեմբերի 6-ի ԵԽ նախարարների կոմիտեի կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի 20 ուղենիշային սկզբունքներին,

➤ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիային,

➤ հանցագործ հասույթների որոնման, առգրավման և բռնագրավման մասին կոնվենցիաներին,

➤ ԵԽ արդարադատության նախարարների համաժողովներում ընդունված առաջարկություններին (Վալլետա, 1994 թ., Պրահա, 1997 թ.), կոռուպցիայի դեմ պետությունների հատուկ խմբի ստեղծմանը (GRECO),

➤ ԵԽ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիային /ՀՀ-ն ստորագրել է 2003 թվականի մայիսի 15-ին, վավերացրել է՝ 2004 թվականի հունիսի 8-ին/,

➤ ԵԽ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիային /ՀՀ-ն ստորագրել է 2004 թվականի փետրվարի 17-ին, վավերացրել է՝ 2004 թվականի դեկտեմբերի 8-ին/:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության կողմից ԱՊՀ մասնակից պետությունների կազմակերպության շրջանակներում իրականացվող աշխատանքները և նշված կազմակերպության շրջանակներում համագործակցությունը: Այս առումով տեղին է նշել ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի մասին, որը ստեղծվել է ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների 07.12.1995թ. համատեղ որոշմամբ: ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի մասին պետությունների ղեկավարների խորհրդի 25.01.2000թ. որոշմամբ ԱՊՀ ՄՊ ԳԴՀԽ-ին շնորհվել է ԱՊՀ միջազգային մարմնի կարգավիճակ: ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի մասին 25.01.2000թ. որոշումը ստորագրվել է Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ադրբեջանի Հանրապետությունների, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի և Ուկրաինայի կողմից:

Որպես կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմք՝ հարկ ենք համարում անդրադառնալ կոռուպցիայի հակազդմանն ուղղված ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրին, որն ընդունվել է 2019 թվականի հոկտեմբերի 11-ին և վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից: Համաձայնագրի նպատակն է կոռուպցիայի

հակազդման ոլորտում ազգային ջանքերի և մասնակից պետությունների համագործակցության արդյունավետության բարձրացումը: Համաձայնագիրը կարևոր նշանակություն ունի ոչ միայն կոռուպցիայի հակազդման իրավական հիմք հանդիսանալու տեսանկյունից, այլև այդ ուղղությամբ անհրաժեշտ գործիքակազմ և արդյունավետ համագործակցություն ապահովելու առումով: Ըստ այդմ, մասնակից պետությունների համագործակցությունը ներառում է կոռուպցիոն հանցագործությունների և իրավախախտումների վերաբերյալ գործերով օժանդակության տրամադրում, համակարգված և համաձայնեցված օպերատիվ-հետախուզական, օպերատիվ-պրոֆիլակտիկ միջոցառումների և հատուկ գործողությունների իրականացում կոռուպցիոն հանցագործությունների հակազդման ոլորտում, կոռուպցիոն հանցագործություններ կատարած անձանց հետախուզման, ձերբակալման և հանձնման ոլորտում համագործակցության իրականացում և այլն:

ԱՊՀ մասնակից պետությունների կազմակերպության շրջանակներում 2013 թվականի հոկտեմբերի 25-ի համաձայնագրով ստեղծվել է «Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհուրդը», իսկ համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2016 թվականի հոկտեմբերի 25-ին: Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի կազմի մեջ են մտնում Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի Հանրապետությունները և Ռուսաստանի Դաշնությունը: Խորհուրդը ԱՊՀ ոլորտային համագործակցության մարմին է և կոչված է իր իրավասության շրջանակներում կոռուպցիայի հակազդման կազմակերպման և համակարգման համար: Բացի այդ, խորհուրդը լիազորված է նաև կոռուպցիայի հակազդման ոլորտում մասնակից պետությունների պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության իրականացման և միջազգային կազմակերպությունների և նրանց կառույցների հետ կառուցողական համագործակցության ապահովման գործառույթներով: Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հիմնական խնդիրներն են՝ համագործակցության առաջնահերթ ուղղությունների նախանշումը և կոռուպցիայի հակազդման էֆեկտիվ միջոցների համատեղ ընդունումը, մասնակից պետությունների կողմից հակակոռուպցիոն պարտավորությունների կատարման գնահատումը, մասնակից պետությունների միջև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում տեխնիկական աջակցության ծրագրերի համակարգումը: Խորհրդի հիմնական ուղղություններն են՝ մասնակից պետությունների ազգային հակակոռուպցիոն օրենսդրությունների ներդաշնակեցմանն օժանդակելը, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում պետությունների միջև համագործակցության իրավական հիմքը բարելավելու առաջարկների մշակումը, մասնակից պետությունների, ինչպես նաև ԱՊՀ շահագրգիռ մարմինների հակակոռուպցիոն հիմնախնդիրների շուրջ փոխգործակցության համակարգումը, ԱՊՀ շրջանակներում ընդունված հակակոռուպցիոն փաստաթղթերի կատարման ապահովումը:

«Վճարավոր դատախազությունն ակտիվ մասնակցում է ԱՊՀ մասնակից պետությունների զբխավոր դատախազների համակարգող խորհրդի և Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի աշխատանքներին:

Կոռուպցիայի հակազդման կազմակերպատիրավական հիմքերին անդրադառնալիս պետք է նշել «Վճարավոր դատախազությունն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի կարևորությունը, որը հաստատվել է «Վճարավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ:

Սակայն պետք է անդրադառնալ նաև «Վճարավոր դատախազությունն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրին, որով էականորեն բարելավվեցին կոռուպցիայի հակազդման իրավական և կազմակերպական հիմքերը: Նախորդ ռազմավարության շրջանակներում կոռուպցիայի հակազդման ուղղությամբ իրականացվել են հետևյալ կարևոր միջոցառումները.

➤ 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի համաձայն Հայաստանում նախատեսվում էր ստեղծել անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմին, որը ստեղծվել է:

➤ 2018 թվականի մարտի 23-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքը, որով ամբողջությամբ վերանայվել է հանրային ծառայության համակարգը, բարեփոխվել են կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն տարրեր հանդիսացող հայտարարագրման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, բարեվարքության կառուցակարգերը:

➤ 2018 թվականի մարտի 23-ին ընդունվել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը, որի պահանջների գործնական իրացման արդյունքում քաղաքացիական ծառայության համակարգը դարձել է առավել մրցունակ:

➤ Նորմատիվ իրավական ակտի նախագծերի իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, այդ գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով 2016 թվականի սեպտեմբերի 2-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» «Վճարավարության 1134-Ն որոշումը (ուժը կորցրած է ճանաչվել «Վճարավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշմամբ), որի հիման վրա ստեղծվել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք: Միաժամանակ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համահունչ՝ «Վճարավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների

կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1146-Ն որոշմամբ սահմանվել է հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման նոր կարգը՝ հիմքում ունենալով հրապարակայնության, մատչելիության, թափանցիկության և հանրային հաշվետվողականության սկզբունքները:

➤ Պետական կառավարման համակարգի թափանցիկության ապահովման, վարչարարության պարզեցման նպատակով ներդրվել են կամ ներդրման փուլում են էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) մի շարք առանձին գործիքներ (օրինակ՝ e-request.am, e-hotline.am, e-license.am և այլն):

➤ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների փաթեթը, որի արդյունքում քրեականացվել է ապօրինի հարստացումը:

➤ 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված «Քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներով քրեական և վարչական պատասխանատվություն է սահմանվել, համապատասխանաբար, հայտարարագրերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու, հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու և հայտարարագրերը սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար:

➤ 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Ազդարարման համակարգի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը: Օրենսդրական փաթեթի շրջանակներում սահմանվել են ազդարարների պաշտպանության երաշխիքների, ինչպես նաև գործուն կառուցակարգերի ներդրման դրույթներ (անանուն հաղորդում ներկայացնելու մեխանիզմ)՝ նպատակ հետապնդելով նպաստել հանրության մեջ կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը, կոռուպցիոն դեպքերի բացահայտմանը, կոռուպցիոն դեպքեր բացահայտող մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Միևնույն ժամանակ, վերը նշված օրենքի կենսագործումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ Կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն և 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն որոշումներով համապատասխանաբար հաստատվել են «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների

հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը» և «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը»:

2019-2022թթ. ռազմավարությունը, ի թիվս այլ նպատակների, ուղղված է հանրային կառավարման համակարգում բարեվարքության, թափանցիկության, մասնակցայնության արդյունավետ և իրագործելի կառուցակարգերի ստեղծմանն ու կատարելագործմանը, պետական համակարգում կոռուպցիայի հակազդմանն ուղղված միասնական կանոնների թելադրմանը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդելի ներդրմանը /«Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի 24-րդ կետն ուղղակիորեն ազդարարում էր, որ հակակոռուպցիոն ռազմավարության գլխավոր նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներն իրագործելու միջոցով Հայաստանում կոռուպցիայի պրոգրեսիվ և հեղինակական նվազեցմանը նպաստելն է (...)/: Ընդունված ռազմավարությամբ կարևորվում է հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման գործընթացին քաղաքացիական հասարակության և քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունը և հանրային վերահսկողության անհրաժեշտությունը:

2019-2022թթ. ռազմավարությամբ կոռուպցիայի հակազդման ոլորտում նախատեսվում են բազմաթիվ էական միջոցառումների մշակում և իրականացում, որոնցից առավել կարևոր նշանակություն կարող են ունենալ կոռուպցիայի դեմ համակարգված պայքարի գործում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառնություններով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորումը, հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծումը, ՀՀ գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծումը /ստեղծվել է/, պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորումը, պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխումը, գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործումը, ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրումը, լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորումը, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովումը, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրումը /«ՀՀ արդարադատության նախարարության կողմից արդեն իսկ շրջանառության մեջ են դրվել համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագծերը/, բանկային

հաշիվների կենտրոնացված ռեսուրսի ստեղծումը, կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրումը:

Չնայած կոռուպցիայի հակազդման ոլորտում իրավակարգավորումների և գործող մեխանիզմների առկայությանը, հակակոռուպցիոն պայքարի արդյունավետությունն էականորեն կախված է հասարակության կողմից երևույթի ընկալման, գիտակցված ժխտման և կոռուպցիայի հանդեպ առհասարակ բացասական վերաբերմունքի ձևավորման ուղղությամբ ինչպես պետության, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից իրականացվող համալիր միջոցառումների, ինչպես նաև պետության կողմից այդ ուղղությամբ իրականացվող սոցիալ-տնտեսական, կազմակերպական, գաղափարախոսական միջոցառումների արդյունքներից, սակայն պետք է փաստել, որ հայ իրականության մեջ այս առումով բավականին բարդ իրավիճակ է ստեղծվել՝ պայմանավորված հայ հասարակության մեջ կոռուպցիայի դրսևորումներից թերևս ամենատարածվածը հանդիսացող՝ կաշառք տալը և ստանալը ազգային ավանդույթների դրսևորումներ համարելու հանգամանքով: Հանուն արդարության պետք է ընդունել, որ մեր հասարակությունում շատ դեպքերում նույնիսկ կաշառք չտալը դատապարտելի է, մանավանդ, երբ խոսքը, այսպես ասած, կաշառք-շնորհակալության մասին է: Նման պայմաններում կաշառակերության լատենտայնությունն էլ ավելի է բարձրանում, քանի որ մարդկանց գերակշիռ մասը հակված չէ այդ փաստերի մասին հաղորդելու իրավապահ մարմիններին: Բացի այդ, հայի հոգեբանության դրսևորումներից է նեպոտիզմը. ազգակցական, ընկերային կապերը, ազգակցական և ընկերային շահերը վեր են դասվում հասարակականից: Հայ հասարակության մեջ պարսավանքի է արժանանում այն պաշտոնատար անձը, որը չի օգնում իր ընկերոջը, ազգականին, հարևանին: Ուստի, այս առումով, կոռուպցիայի դեմ համակողմանի և արդյունավետ պայքար մղելու համար ոչ միայն և ոչ այնքան կարևոր է սոցիալ-տնտեսական և կազմակերպական, որքան գաղափարախոսական միջոցառումների իրականացումը: Այս նպատակին հասնելու կարևոր միջոց պետք է դիտարկել կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունք սերմանելուն ուղղված կրթական ծրագրերի իրականացումը: Ի դեպ, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված է հակակոռուպցիոն կրթական առարկաների ուսուցանում ինչպես բարձրագույն և միջին մասնագիտական, այնպես էլ հիմնական կրթության օղակներում: Ամեն դեպքում, կոռուպցիայի դեմ պայքարի գաղափարախոսական բաղադրիչի իրացվածության աստիճանը մեր հասարակությունում կարող է դրական գնահատվել տարիների քրտնաջան և հետևողական աշխատանքի, հասարակության և պետության մեկտեղված ջանքերի շնորհիվ:

§ 1.2 Կոռուպցիոն հանցագործությունների էությունը և տարանջատման չափանիշները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ իրավական ակտում սահմանված չէ «կոռուպցիոն հանցագործություններ» հասկացությունը, թեև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.03.20 N ՀՕ-207-Ն ՀՀ օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկ» վերտառությամբ 6-րդ հավելվածով:

«Կոռուպցիոն հանցագործություններ» հասկացության վերաբերյալ տարբեր հեղինակների դիրքորոշումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ «կոռուպցիոն հանցագործություններ» հասկացության սահմանումն առավելապես ընդգրկում է կոռուպցիայի՝ որպես սոցիալական երևույթի արտահայտման ձի նկարագրություն՝ նախատեսված քրեական օրենսդրությամբ: «Կոռուպցիոն հանցագործություններ» սահմանումն իր մեջ հիմնականում ընդգրկում է նաև այն հիմնական հատկանիշները, որոնք բնութագրում են հենց «կոռուպցիա» երևույթը: ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանվել է որոշակի չափանիշներ հաշվի առնելով՝

➤ հանցագործություններն ուղղված են պետական ծառայության (հանրային ծառայության, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության) առևտրային կամ այլ կազմակերպությունների գործունեության դեմ,

➤ հանցանքը կատարվել է հատուկ սուբյեկտի կողմից,

➤ հանցանքը կատարվել է անձնական կամ խմբային շահերից ելնելով:

Այս առումով պետք է նշել, որ մինչև ՀՀ քրեական օրենսգրքում 2020 թվականի մարտի 25-ի փոփոխությունը՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանվել էր ՀՀ գլխավոր դատախազի՝ 2008 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանով, որի հիմքում ևս ընկած էին թվարկված չափանիշներին գրեթե նույնական չափանիշներ:

ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով ուժը կորցրած է ճանաչվել 2008 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանը և հաստատվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը: Այս հրամանն ուշադրության է արժանի նախ նրանով, որ, մինչև կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանելու մասին ՀՀ ԱԺ կողմից համապատասխան օրենքի ընդունումը, այն միակ նմանատիպ իրավական ակտն էր, ապա նաև այն պատճառով, որ հրամանի հիմքում դրվել էին կոռուպցիոն հանցագործությունների դասակարգման այնպիսի չափանիշներ, որոնք արդիական են նաև ներկայումս, և նոր քրեաիրավական կարգավորումներն ամբողջությամբ համապատասխանում են այդ չափանիշների տրամաբանությանը: Ըստ այդմ՝ ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանի համաձայն՝

կոռուպցիոն հանցագործություններ են համարվել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված այն արարքները, որոնք համապատասխանել են հետևյալ չափանիշներին՝

➤ հանցավոր արարքը հատուկ սուբյեկտի՝ պաշտոնատար անձի, կամ առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ իրականացնող կամ առևտրային կազմակերպություններում այլ պաշտոն զբաղեցնող անձի կողմից կատարված լինելը,

➤ հանցավոր արարքը՝ ծառայողական դիրքի ընձեռած հնարավորություններն օգտագործելով կատարված լինելը,

➤ հանցավոր արարքը՝ ոչ իրավաչափ առավելություն ստանալու նպատակով՝ շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով կատարված լինելը,

➤ այն հանցավոր արարքները, որոնք թեև չեն համապատասխանել վերը նշված չափանիշներին, բայց ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով համարվել են կոռուպցիոն հանցագործություններ:

ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված 67 հանցակազմ դասվել է կոռուպցիոն հանցագործությունների շարքին, որը ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 56 հրամանով լրացվել է ևս 3 հանցակազմով, այդպիսով ընդհանուր կարգավորման արդյունքում որպես կոռուպցիոն սահմանելով 70 հանցակազմ:

Եթե համեմատենք ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածը և ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի նշված հրամանը, կփաստենք, որ ներկայումս կոռուպցիոն հանցագործությունների շրջանակն էականորեն սահմանափակվել է, ինչը կոռուպցիայի դեմ համակողմանի պայքար մղելու տեսանկյունից կարող է բացասական նշանակություն ունենալ:

Հարկ է նշել նաև, որ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար մղելու նպատակով միայն համապատասխան միջոցառումների և գործիքակազմի օրենսդրական ձևակերպումները և նախատեսումը բավարար չեն: Անհրաժեշտ է ունենալ առօրյա, գործնական աշխատանքի նպատակայնությունը բարձրացնելուն միտված միջոցառումների հստակ ուղեցույց, որը կնպաստի կոռուպցիայի դեմ պայքարի գործում շոշափելի արդյունքների ձեռքբերմանը: Այս առումով առանձնահատուկ կարևորություն ունի կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով մինչդատական քրեական վարույթի ընթացքում այնպիսի մեխանիզմների կիրառումը, որը թույլ կտա իրավապահ մարմիններին հնարավորինս արդյունավետ իրականացնել հիշյալ բնույթի հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի քննությունը: Այլ խոսքով, անհրաժեշտ է մշակել կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման՝ գիտականորեն հիմնավորված և միասնական մեթոդիկա, այն է՝

որոշակի սկզբունքների և չափորոշիչների ամբողջություն, որը հնարավորություն կտա իրավակիրառողին համակողմանիորեն բացահայտել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բոլոր փաստական հանգամանքները, դրսևորման եղանակներն ու առանձնահատկությունները, ժամանակի ընթացքում փոփոխվելու ունակությունը և այլ կարևոր հանգամանքներ՝ անկախ դրանց տեսակից, բնույթից և այն կատարած անձանց շրջանակից: Այս առումով կարևոր է նախանշել այն հիմնական չափանիշները, որոնք, սովորաբար, բնորոշ են կոռուպցիոն բնույթի տարբեր, հիմնականում համասեռ տարբեր հանցագործությունների դրսևորումներին, այսինքն՝ անհրաժեշտ է նախ և առաջ ընդգծել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի քննությամբ պարզաբանման ենթակա ընդհանուր հանգամանքները: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև նշված հանգամանքների ընդհանրական ձևակերպումներից զատ անդրադարձ կատարել ինչպես կոռուպցիոն բնույթի առանձին հանցատեսակների քննության, այնպես էլ տարբեր քննչական և դատավարական գործողությունների կատարման առանձնահատկություններին: Միաժամանակ պետք է փաստել, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի քննության ինչպես ընդհանրական, այնպես էլ առանձին հանցատեսակների քննության առանձնահատկությունների վերաբերյալ ամենախորքային վերլուծություններն ու մշակված մեթոդական հնարքները թեև կարող են էապես նպաստել քննության որակի բարձրացմանը և այդպիսով տվյալ հանցագործության համակողմանի բացահայտմանը, սակայն յուրաքանչյուր քրեական գործի քննության առանձնահատկությունները յուրովի են, խիստ անհատական և շատ դեպքերում կարող են տարբեր քրեական գործերի պարագայում գործնականում բերել տարբեր արդյունքների:

Այդպիսով, կարևոր նշանակություն ունի նաև մշակված և կիրառելի գործիքակազմի արդյունավետությունն ապահովելու նպատակով դրանց մանրակրկիտ վերլուծությունը՝ կոնկրետ քրեական գործի փաստական հանգամանքների համադրմամբ, ապա նոր միայն գործնական աշխատանքում գործածելը:

§ 2 Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերը

§ 2.1 Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը

Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերին անդրադառնալուց առաջ անհրաժեշտ է հնարավորինս ընդգրկուն կերպով ձևակերպել կոռուպցիոն հանցագործությունների սահմանումը: Այդ կապակցությամբ տարբեր հեղինակների

կողմից ներկայացված տեսակետների ամփոփման արդյունքում կոռուպցիոն հանցագործությունները կարելի է սահմանել որպես հանրային վտանգավորություն ներկայացնող, քրեական օրենքով արգելված, պաշտոնատար անձանց, ծառայողների /այդ թվում՝ առևտրային կազմակերպությունների/ կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ, շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, դիտավորությամբ կատարված արարքներ, որոնք ուղղված են իր կամ երրորդ անձանց համար առավելություններ ստանալուն, որոնք վնաս են պատճառել քաղաքացիների, հասարակության և պետության օրինական շահերին: Այս՝ հնարավորինս ընդհանրական ձևակերպումից ուղղակիորեն բխում է կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը: Հարկ ենք համարում կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական բնութագրին անդրադառնալ ըստ հանցակազմի տարրերի՝ առանձին-առանձին:

Կոռուպցիոն հանցագործությունների օբյեկտը.

Կոռուպցիոն հանցագործությունների ընդհանրական սահմանումից և ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկում ընդգրկված հանցագործությունների բնույթից ելնելով պետք է նշել, որ քննարկվող հանցագործությունների դեպքում կարող են դիտարկվել տարբեր անմիջական օբյեկտներ, այդ թվում՝ տարբեր հիմնական և լրացուցիչ անմիջական օբյեկտներ: Պետք է նշել նաև, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների զգալի մասն ընդգրկված է ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխում, որում ներառված են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոռուպցիոն հանցագործություններ են համարվում նաև մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների, սեփականության, տնտեսական գործունեության, արդարադատության, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցավոր ոտնձգությունները:

Այսպիսով, կոռուպցիոն հանցագործությունների հիմնական անմիջական օբյեկտներ են.

➤ պետական ապարատի նորմալ գործունեությունը ապահովող հասարակական հարաբերությունները /ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 310-րդ, 310.1-րդ, 311-րդ, 311.1-րդ, 311.2-րդ, 312-րդ, 312.2-րդ, 313-րդ, 314-րդ, 314.2-րդ, 314.3-րդ հոդվածներ/,

➤ տնտեսական գործունեության բնականոն ընթացքն ապահովող հասարակական հարաբերությունները /ՀՀ քրեական օրենսգրքի 189.1-րդ, 190-րդ, 190.1-րդ, 190.2-րդ, 195-րդ, 200-րդ, 201-րդ, 214-րդ հոդվածներ/,

➤ սեփականությունը, զույգի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումն ապահովող հասարակական հարաբերությունները /ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ և 179-րդ հոդվածներ/,

➤ արդարադատության իրականացման հետ կապված իրավապահ մարմինների նորմալ գործունեությունն ապահովող հասարակական հարաբերությունները /<< քրեական օրենսգրքի 332-րդ և 352-րդ հոդվածներ/,

➤ քաղաքական իրավունքների և ազատությունների իրացումը, մասնավորապես՝ << քաղաքացիների ընտրական իրավունքի ազատ իրականացումն ապահովող հասարակական հարաբերությունները /<< քրեական օրենսգրքի 154.2-րդ և 154.9-րդ հոդվածներ/,

➤ զինվորական ծառայության սահմանված կարգն ապահովող, մասնավորապես՝ զինվորական պետերի և պաշտոնատար անձանց միջև առաջացող հասարակական հարաբերությունները /<< քրեական օրենսգրքի 375-րդ հոդված/:

Ի տարբերության կոռուպցիոն հանցագործությունների հիմնական անմիջական օբյեկտի՝ լրացուցիչ անմիջական օբյեկտի հարցի ընդհանրական քննարկումը որոշակի դժվարություններ կարող է առաջացնել, որը կապված է յուրաքանչյուր կոնկրետ հանցավոր արարքի դրսևորման առանձնահատկությունների հետ: Կոռուպցիոն հանցագործությունների լրացուցիչ անմիջական օբյեկտի պարզաբանումն առավել հստակ հնարավոր է տալ բացառապես կոնկրետ հանցագործության դեպքը քննարկելիս: Սակայն ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ կոռուպցիոն հանցագործությունների լրացուցիչ անմիջական օբյեկտներ կարող են հանդես գալ մարդու կյանքը, առողջությունը, սեփականությունը, մարդկանց սահմանադրական մյուս իրավունքներն ու ազատություններն ապահովող հասարակական հարաբերությունները: Օրինակ՝ պաշտոնեական անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացրած պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի դեպքում հանցագործության հիմնական անմիջական օբյեկտ են պետական ապարատի նորմալ գործունեությունն ապահովող հասարակական հարաբերությունները, իսկ լրացուցիչ անմիջական օբյեկտ կարող են հանդիսանալ ինչպես սեփականության, այնպես էլ մարդու կյանքի կամ առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Կոռուպցիոն հանցագործությունների օբյեկտիվ կողմը.

Կոռուպցիոն հանցագործությունների օբյեկտիվ կողմը կարող է արտահայտվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Քննարկվող հանցագործությունների դեպքում օբյեկտիվ կողմը դրսևորվում է պաշտոնեական լիազորությունների օգտագործմամբ կամ առանց դրա քաղաքացու, հասարակության կամ պետության օրինական շահերին հակադրվող արարք՝ գործողություն կամ անգործություն կատարելու մեջ:

Գործողությամբ արտահայտված կոռուպցիոն հանցագործության կատարման օրինակ կարող է հանդիսանալ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը, իսկ

անգործությամբ կատարելու օրինակ՝ պաշտոնատար անձի կողմից ծառայողական պարտականությունները չկատարելը, որը կատարվել է շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով և էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին:

Կոռուպցիոն հանցագործությունների ընդգրկումն ենթախումբ հանդիսացող՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում կարևոր նշանակություն ունի նաև օբյեկտիվ կողմի այնպիսի հատկանիշի պարզաբանումը, ինչպիսին հանցանքի և պաշտոնեական լիազորությունների միջև կապն է: Այլ խոսքով՝ պետական ծառայության կարգի դեմ ուղղված հանցանք առկա է միայն այն դեպքում, երբ կատարվող հանցագործությունը կապված է անձի ծառայության հետ:

Կոռուպցիոն որոշ հանցագործությունների դեպքում օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանրորեն վտանգավոր հետևանքը: Նմանատիպ դեպքերում օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև ուղղակի պատճառական կապը հանցավորի գործողությունների և հանրորեն վտանգավոր արարքի միջև:

Կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտը.

Կոռուպցիոն հանցագործությունների մեծ մասին բնորոշ է հատուկ սուբյեկտի առկայությունը, այսինքն՝ կոռուպցիոն հանցագործությունների մեծ մասը կատարվում է պաշտոնատար անձանց կողմից: ՀՀ քրեական օրենսգիրքը հստակ սահմանում է այն չափանիշները, ըստ որոնց հնարավոր է դառնում հստակ տարբերակել պաշտոնատար անձանց: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պաշտոնատար անձինք են հանդիսանում.

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք,

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Սույն օրենսգրքի 311-րդ, 311.2-րդ, 312-րդ, 312.2-րդ և 313-րդ հոդվածներով նախատեսված պաշտոնատար անձինք են նաև՝

1) օտարերկրյա պետության՝ տվյալ պետության ներպետական իրավունքին համապատասխան՝ պետական պաշտոնյայի գործառույթներ իրականացնող անձինք, ինչպես նաև օտարերկրյա պետության օրենսդիր մարմնի կամ վարչական լիազորություններ իրականացնող որևէ ներկայացուցչական մարմնի անդամները.

2) միջազգային կամ վերազգային հանրային կազմակերպության կամ մարմնի պաշտոնյաները կամ այդ կազմակերպության կամ մարմնի

կանոնակարգերով նախատեսված դեպքերում պայմանագրերով աշխատողները կամ այլ անձինք, որոնք կատարում են նման պաշտոնյաների կամ աշխատողների կողմից իրականացվող գործառույթներին համապատասխանող գործառույթներ.

3) միջազգային կամ վերազգային կազմակերպության, խորհրդարանական վեհաժողովի կամ նման գործառույթ իրականացնող այլ մարմնի անդամները.

4) միջազգային դատարանի, որի իրավասությունն ընդունել է Հայաստանի Հանրապետությունը, դատական գործառույթներ իրականացնող անդամները կամ պաշտոնյաները.

5) օտարերկրյա պետությունների դատարանների երդվյալ ատենակալները»: ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում անհրաժեշտ է պարզաբանել նաև իշխանության ներկայացուցչի, կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձանց տարանջատելու սահմանները և չափանիշները:

Իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք են հանդիսանում իրենցից ծառայական կախվածություն չունեցող, իրենց ծառայական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ կարգադրիչ լիազորություններով օժտված անձինք: Սովորաբար իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք իրենց ենթակայության տակ ծառայողներ չունեն, սակայն իշխանական լիազորություններով են օժտված անորոշ շրջանակի քաղաքացիների նկատմամբ: Իշխանության ներկայացուցիչներն իրականացնում են օրենսդիր, գործադիր և դատական իշխանություն: Ընդ որում, իշխանության ներկայացուցիչ կարող են համարվել նաև այն անձինք, որոնք իշխանության ներկայացուցչի գործառույթներ են իրականացնում ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ, երբ պաշտոնապես, օրենքով սահմանված կարգով ներգրավվում են հանցավորության դեմ պայքարին կամ վերահսկիչ գործունեության իրականացմանը և օժտվում են համապատասխան լիազորություններով:

Մշտական հիմունքներով իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող է համարվում այն պաշտոնատար անձը, որը պաշտոնավարում է օրենքով սահմանված կարգով և ժամկետների շրջանակներում: Այսինքն, այն դեպքում, երբ, թեկուզև, անձի պաշտոնավարումն իրականացվում է որոշակի ժամկետի ընթացքում, այնուհանդերձ, այն համարվում է մշտական, քանզի հիմնված է պաշտոնավարման կայունության և տևականության վրա, և մինչև պաշտոնի դադարեցումը, ժամանակային առումով, առկա են պաշտոնավարման բավարար երաշխիքներ:

Ժամանակավորապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող է համարվում այն պաշտոնատար անձը, որն իր գործառույթներն իրականացնում է որոշակի ժամկետով (ժամանակավոր) ստեղծված կառույցի շրջանակներում:

Առանձին լիազորությամբ օժտված իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձանց թվին պետք է դասել

դեսպանորդին, կցորդին, հատուկ հանձնարարությամբ դեսպանին, Ազգային ժողովում Նախագահի ներկայացուցչին և այլն:

Կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող պետական ծառայողներ են այն անձինք, որոնց ծառայողական գործունեությունը կապված է մարդկանց կառավարման հետ: Այդ գործառույթները ներառում են՝ աշխատանքային կոլեկտիվի ղեկավարումը, համապատասխան կադրերի հավաքագրումը և բաշխումը, աշխատանքի կազմակերպումը, կարգապահության ապահովումը, խրախուսանքի միջոցների և կարգապահական տույժերի կիրառումը և այլն: Այդպիսի սուբյեկտներ կարող են հանդիսանալ նախարարությունների ղեկավարները, հիմնարկ-ձեռնարկությունների տնօրենները, վարչությունների, բաժինների պետերը և այլն:

Վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պետական ծառայողներ են այն անձինք, որոնք օժտված են գույքի, նյութական արժեքների տնօրինման, կառավարման լիազորություններով (գույքի, նյութական արժեքների պահպանության, վերամշակման, իրացման կարգի սահմանում, նյութական արժեքների իրացման նկատմամբ հսկողության սահմանում, գույքի, նյութական արժեքների, դրամական միջոցների ստացում և հանձնում և այլն):

Կոռուպցիոն հանցագործությունների հատուկ սուբյեկտի հարցը քննարկելիս պետք է անդրադառնալ նաև «հանրային ծառայող» հասկացությանը, որը ևս կարող է նշված հանցագործությունների սուբյեկտ հանդիսանալ:

Այսպես. ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Սույն գլխի իմաստով հանրային ծառայողներ են համարվում «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող անձինք»:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

«/.../1. Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:

/.../

5. Հանրային ծառայության պաշտոնն արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն և մասնագիտական գործունեություն պահանջող հաստիքային միավոր է, որը նախատեսված է պետական ծառայության առանձին տեսակների համար նախատեսված պաշտոնների անվանացանկով կամ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով:

6. Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի համապատասխան ռեզերվում գտնվող անձը համարվում է հանրային ծառայող:

/.../»:

Կոռուպցիոն հանցագործությունների հատուկ սուբյեկտ է հանդիսանում նաև առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողը:

Այսպես. ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝
«/.../

5. Սույն գլխի հոդվածներում առևտրային կամ այլ կազմակերպության ծառայող է համարվում այն անձը, որը մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ իրականացնում է կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ կամ զբաղեցնում է ցանկացած այլ պաշտոն առևտրային կազմակերպություններում՝ անկախ սեփականության ձևից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնարկներ չհամարվող ոչ առևտրային կազմակերպություններում/.../»:

Կոռուպցիոն հանցագործությունների հատուկ սուբյեկտ է նաև զինվորական ծառայության մեջ գտնվող պետը կամ պաշտոնատար անձը:

Այսպես. ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝
«/.../

5. Սույն գլխով նախատեսված զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներն են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք և վարժական հավաքներ անցնող զինապարտները (այսուհետ՝ զինծառայող):

6. Սույն գլխում պետ (հրամանատար) է համարվում ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով բարձր այն անձը, որը տվյալ իրավահարաբերության շրջանակում եղել է տվյալ զինծառայողի վերադասը, այսինքն՝ ունեցել է իր լիազորություններից բխող հրամաններ, կարգադրություններ տալու և դրանց կատարումն ապահովելու իրավասություն/.../»:

Զինվորական ծառայության մեջ գտնվող պետի կամ պաշտոնատար անձի սահմանումն առավել հստակ տալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել զինվորական կանոնադրությունները և զինվորական պետերի հրամաններն ու կարգադրությունները և, որոնց միջոցով պետք է որոշել տվյալ իրավահարաբերության շրջանակում զինծառայողի՝ վերադաս հանդիսանալու, հրամաններ, կարգադրություններ տալու և դրանց կատարումն ապահովելու իրավասություն ունենալու, հրամանը կամ կարգադրությունը սահմանված կարգով արձակված լինելու, ծառայողական դիրքերի հարաբերակցման, զինվորական ենթակայությանն առնչվող այլ հանգամանքներ:

Ամփոփելով կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտին առնչվող դիտարկումները՝ կարելի է գալ եզրահանգման, որ ՀՀ քրեական օրենսգրքով և օրենսդրական այլ ակտերով հստակորեն ամրագրված են այն չափանիշները, որոնց միջոցով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հնարավոր է տարանջատել

քննարկվող հանցագործությունների սուբյեկտը, ինչպես նաև հստակ սահմանազատել հանցագործության սուբյեկտի լիազորությունների շրջանակը, թեև առանձին դեպքերում կարող են առաջանալ որոշակի դժվարություններ:

Կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտիվ կողմը.

Կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով, հիմնականում՝ ուղղակի դիտավորությամբ: Պաշտոնատար անձը գիտակցում է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսում է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկանում է այդ հետևանքների վրա հասնելը: Գործնական աշխատանքում երբեմն դժվարություններ են առաջանում այնպիսի իրավիճակներում, երբ քննությամբ հաստատված է համարվում պաշտոնատար անձանց կողմից ուղղակի դիտավորությամբ գործելու հանգամանքը՝ այս կամ այն հանցավոր նպատակին հասնելու համար, սակայն քրեաիրավական կարգավորումները հնարավորություն չեն տալիս համակողմանի գնահատական տալու վերջինիս արարքին: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքին, որի դեպքում օրենսդիրը ծանր հետևանքների առաջացումը կապում է բացառապես մեղքի անզգույշ ձևի հետ: Կարծում ենք, որ այս դեպքում առավել տրամաբանական է ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածով տրված կարգավորումը, որի համաձայն՝ նյութական ծանր հետևանքների առաջացումը հնարավոր է ինչպես մեղքի անզգույշ, այնպես էլ դիտավորյալ ձևի պայմաններում:

Քննարկվող առանձին հանցատեսակների դեպքում սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև հանցագործության կատարման շարժառիթը:

§ 2.2 Կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը.

Կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիր ասելով պետք է հասկանալ հանցագործությունների որոշակի կատեգորիայի անհատական առանձնահատկությունների փոխկապակցված համակարգ, որը բնութագրում է հանցագործության կատարման մեթոդը, մեխանիզմը, հանցագործությունը թաքցնելու եղանակը, հանցագործի և տուժողի ինքնությունը, որոնք կարևոր են հանցագործությունների բացահայտման և քննության համար: Այլ խոսքով՝ կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրն իր մեջ ներառում է այն տեղեկությունների համակցությունը, որն օգնում է հանցագործությունը բացահայտելուն:

Կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրում պետք է ներառել հանցագործության կատարման եղանակի և միջոցների, ենթադրյալ հանցանք կատարած անձի և հանցագործության կատարման նպատակների ու դրդապատճառների վերաբերյալ տեղեկությունները:

Նշվածից բացի, կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրի մեջ կարող են ներառվել նաև այնպիսի կարևոր տվյալներ, ինչպիսիք են՝ հանցագործության կատարման տեղը, ժամանակը, օբյեկտիվ կողմի այլ հանգամանքները, ենթադրյալ հանցանք կատարած անձի ինքնությունն ու ունեցած կապերը, փոխհարաբերությունները տուժողի կամ մյուս հանցակիցների հետ և այլն:

Ինչպես ցանկացած տեսակի, այնպես էլ կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրի հիմնական տարրը հանցագործության կատարման մեթոդին, եղանակին և միջոցներին վերաբերող տվյալներն են, քանի որ դրանք կարևոր նշանակություն ունեն հանցագործության մասին տեղեկատվության ձևավորման համար:

Հանցագործության կատարման մեթոդը կենտրոնական տեղ է զբաղեցնում կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրում: Հանցագործության կատարման մեթոդը թույլ է տալիս բացահայտել կատարված հանցագործության թուվանդակությունը, հնարավոր կատարման գործիքները, եղանակները: Կոռուպցիոն հանցագործությունների կատարման մեթոդները հիմնականում պարունակում են հանցագործությանը նախապատրաստվելուն, իրականացնելուն ուղղված գործողություններ, որոնք միտված են հանցավոր նպատակներին հասնելուն և կատարված հանցագործությունը թաքցնելուն:

Կոռուպցիոն հանցագործությունների կատարման մեթոդը կարելի է բաժանել երկու մասի.

- Ոչ իրավաչափ գործողության կատարում,
- հանցավորի կամ այլ անձի համար նյութական օգուտի ստացում:

Ոչ իրավաչափ գործողություններ կարող են կատարվել ինչպես օրենքով սահմանված պաշտոնական լիազորությունների խախտմամբ, այնպես էլ առանց դրա: Շատ դեպքերում այդ գործողությունները վերաբերում են շահագրգիռ կողմերին փաստաթղթերի տրամադրմանը, կոռուպցիոն հանցագործությունների մասնակիցների շփումներն արտացոլող փաստաթղթերի պատրաստմանը, հաստատմանը, ինչպես նաև այլ գործողությունների կատարմանը:

Կոռուպցիոն հանցագործությունների կատարման եղանակը բնորոշվում է վառ արտահայտված ինքնատիպությամբ: Դրա նշանակությունը ոչ այնքան տարածաժամանակային պայմաններն են, որքան պետական՝ ապարատում կամ կազմակերպություններում աշխատող պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորությունների շրջանակում կամ դրանից դուրս գործողությունների կատարումը տարբեր ոլորտներում:

Կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրում կարևոր տեղ է զբաղեցնում նաև հանցագործության սուբյեկտին բնորոշ առանձնահատկությունները: Մասնագետների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կոռուպցիոն հանցագործությունները հիմնականում կատարվում են 30-50 տարեկան անձանց կողմից: Կոռուպցիոն հանցագործություններից շատերն իրականացվում են կազմակերպված խմբերի կողմից: Հետևաբար, կոռուպցիոն

հանցագործությունների վերաբերյալ քրեական գործեր քննելիս պետք է հաշվի առնել նաև այս հանգամանքը և քննության ընթացքում պատշաճ ուշադրություն դարձնել հանցանքը միայնակ կամ կազմակերպված խմբի կողմից կատարված լինելու հանգամանքի վրա:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր հանցավոր արարք թողնում է իրեն բնորոշ հետք, որը, հետազոտելով, վարույթն իրականացնող մարմինը կարող է պատկերացում կազմել հանցագործության մեխանիզմի մասին, ինչպես նաև առաջ քաշել հանցագործության կատարման եղանակի ու միջոցների վերաբերյալ վարկածներ, իսկ որոշ դեպքերում՝ առաջնային տեղեկություն ստանալ ենթադրյալ հանցանք կատարած անձի մասին: Կոռուպցիոն հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը հանցագործության սուբյեկտին բնորոշ առանձնահատկությունների տեսանկյունից քննարկելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նման հանցանք կատարող անձինք հիմնականում տիրապետում են հատուկ գիտելիքների, օժտված են հատուկ լիազորություններով, որոնք օգտագործվում են իրենց առօրյա մասնագիտական գործունեության ընթացքում: Կարևոր է նկատի ունենալ, որ կազմակերպության աշխատակիցները, իրենց աշխատանքային գործունեության բնույթից ելնելով, տեղյակ են լինում հանցագործության առանձին հանգամանքների մասին, որը պետք է հաշվի առնել առանձին քննչական գործողություններ պլանավորելիս և իրականացնելիս:

Կրիմինալիստիկական կարևոր նշանակություն ունի նաև կոռուպցիոն հանցագործություններ կատարող անձանց ընդհանուր, մասնագիտական և հատուկ պատրաստվածության մասին տվյալների ուսումնասիրությունը:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քրեաիրավական բնութագրի վերլուծությունը պետք է դնել կրիմինալիստիկական առանձնահատկությունների նախանշման գործընթացի հիմքում: Այդ առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ հանցագործության սուբյեկտիվ կողմից բացահայտման միջոցով հանցանք կատարած անձի մասին նախնական տեղեկություն ստանալը: Մասնավորապես, հանցանք կատարելու շարժառիթը և նպատակը բավականին ինֆորմատիվ են հանցագործության բացահայտման առումով, քանի որ, սովորաբար, հանցանք կատարողը, գործելով հիմնականում շահադիտական շարժառիթով, ցանկանում է գույք, իրավունքներ, կամ որոշակի արտոնություններ ձեռք բերել ապօրինի եղանակով, հետևաբար հանցագործության արդյունքում վրա հասած հետևանքները համադրելով դրանք որոշակի անձանց համար ցանկալի կամ բարենպաստ լինելու ենթադրության հետ, կարելի է նախնական պատկերացում կազմել հանցանք կատարած անձանց շրջանակի մասին:

ԳԼՈՒԽ 2

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱԾՄԱՆ ՀԱՆՑԱՏԵՍԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Ապօրինի հարստացման հանցատեսակի ծագումը, զարգացումը և միջազգային փորձը

1936 թվականին Արգենտինայի կոնգրեսի անդամ Ռոդոլֆո Կորոմինաս Սեգուրան գնացքով ճանապարհորդելիս է եղել Մենդոզայում գտնվող իր տնից դեպի Բուենոս Այրես, երբ հանդիպել է մի պետական պաշտոնյայի, որը ցույց է տվել պաշտոնը ստանձնելուց ի վեր կուտակած հարստությունը, որից կոնգրեսականը հասկացել է, որ այդ հարստությունը չի կարող օրինական ճանապարհով ձեռք բերված լինել:

Հիշյալ դեպքից ոգեշնչված կոնգրեսականը ներկայացրել է օրինագիծ, որը նախատեսել է, որ կառավարությունը տուգանելու է «պետական պաշտոնյաներին, որոնք հարստություն են ձեռք բերում առանց ապացուցելու դրա ստացման օրինական աղբյուրը»: Չնայած օրինագիծն օրենք չի դարձել, սակայն նման օրինագծեր հաջորդ օրենսդիր մարմիններում նույնպես ներկայացվել են մինչև 1964 թվականը, երբ, ի վերջո, այն ընդունվել է:

1964 թվականին, գործող օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում, Արգենտինան (հետագայում՝ Հնդկաստանը) դարձավ ապօրինի հարստացումը քրեականացնող առաջին երկիրը:

Հետագայում Հնդկաստանում ապօրինի հարստացումը սահմանվեց որպես ռեսուրսների տնօրինում, «որի համար հանրային ծառայողը չի կարող բավարար հաշվետվություն ներկայացնել», մինչդեռ Արգենտինան այն սահմանում է որպես «իր կամ երրորդ կողմի համար նշանակալի հարստացման ծագումն արդարացնելու ձախողում»:

Արգենտինայում և Հնդկաստանում ապօրինի հարստացումը քրեականացնելուց հետո 20 տարվա ընթացքում նման դրույթներ են մտցվել Բրունեյում, Կոլումբիայում, Էկվադորում, Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում, Դոմինիկյան Հանրապետությունում, Պակիստանում և Սենեգալում:

1990 թվականին ապօրինի հարստացումը քրեականացվել է ավելի քան 10 երկրում, 2000 թվականին՝ ավելի քան 20 երկրում, իսկ 2010 թվականին՝ ավելի քան 40 երկրում: Նշված երկրների համար ապօրինի հարստացումը կոռուպցիայի դեմ պայքարի նոր հայեցակարգ և արմատական գործիք էր:

Այսօր ապօրինի հարստացման դրույթները կարելի է գտնել աշխարհի շատ երկրներում՝ այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում:

Չնայած միջազգային լայն ճանաչմանը, ապօրինի հարստացման քրեականացումը համընդհանուր ընդունված չէ որպես հակակոռուպցիոն միջոց,

փոխարենը՝ այն շարունակում է լայն քննարկումների առիթ հանդիսանալ և հակասություններ ստեղծել թե՛ իրավական, թե՛ գործնական առումով:

Ներկայումս աշխարհում ավելի քան 50 երկիր քրեականացրել են ապօրինի հարստացումը, որոնց մեծ մասը զարգացող երկրներ են: Ապօրինի հարստացումը հետապնդող մի շարք պետություններ դիտարկում են այն որպես կոռուպցիայի դեմ պայքարի ավանդական գործիքակազմի արժեքավոր լրացում: Այնուամենայնիվ, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ այդ պետությունների միայն մի սահմանափակ թվաքանակն է, որ պարբերաբար հետաքննում կամ հետապնդում է հանցագործությունը:

Ապօրինի հարստացման հանցագործության մի քանի տարրեր ընդհանուր են այն պետությունների համար, որոնք այն քրեական հետապնդման են ենթարկում: Այդ տարրերն են՝ հետաքրքրություն ներկայացնող անձինք, հետաքրքրության ժամանակահատված, ակտիվների նշանակալից ավելացում, դիտավորություն և արդարացման բացակայություն:

2009 թվականի նոյեմբերին ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետությունների խորհրդատվորակի երրորդ նստաշրջանն ընդունեց 3/3 բանաձևը, որը հորդորում էր «շարունակել ուսումնասիրությունը և վերլուծությունը, մասնավորապես, ակտիվների վերականգնման գործողությունների արդյունքները, և, համապատասխանաբար, թե ինչպես կարող են օրինական կանխավարկածները, ապացուցման բեռը փոխելու միջոցները և ապօրինի հարստացման շրջանակների ուսումնասիրությունը նպաստել կոռուպցիայից ստացված եկամուտների վերականգնմանը»: Բանաձևին արձագանքեց շատ պետությունների կողմից արտահայտված հետաքրքրությանը, թե ինչպես են տարբեր պետություններ իրականացնում ապօրինի հարստացման քրեականացումը:

Դրա նպատակներն են՝ առաջին հերթին խթանել ապօրինի հարստացման հանցագործության և դրա առջև ծառայած մարտահրավերների ավելի լայն ընկալումը, և երկրորդ՝ արդեն իսկ ապօրինի հարստացումը քրեականացրած երկրների փորձի հիման վրա սահմանել այն հիմնական խնդիրները, որոնք պետք է հաշվի առնվեն ինստիտուցիոնալ և ապօրինի հարստացումը քրեականացնելու իրավական ռեժիմը մշակելիս և դրա հետագա գործնական կիրառումը արդյունավետ դարձնելու նպատակով:

Ամփոփելով, նշենք, որ առկա սահմանափակ փորձը ցույց է տալիս, որ ապօրինի հարստացումը կարող է լինել օգտակար հակակոռուպցիոն և ակտիվների վերականգնման գործիք, որն իրականացվում է մարդու իրավունքների նկատմամբ լիակատար հարգանքով:

§2. Ապօրինի հարստացման էությունը, իրավական հիմքերը և առանձնահատկությունները

Կոռուպցիայի դեմ պայքարը վաղուց արդեն դուրս է եկել ազգային, ներպետական կարգավորման շրջանակներից և դարձել միջազգային հանրության հոգածության առարկա:

Կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն գործիք է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում ընդունված Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա):

Համաձայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի՝ Կոնվենցիայի նպատակներն են.

ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ ու ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը.

բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ ակտիվների վերադարձման ուղղությամբ, միջազգային համագործակցության ու տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը.

գ) պետական գործերի ու պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը:

Նշյալ նպատակներին հասնելու համար էլ, ի թիվս այլ կարգավորումների, Կոնվենցիայի 20-րդ հոդվածը սահմանել է, որ «Իր Սահմանադրությունը և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով՝ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտում ճանաչվի անօրինական հարստացման արարքը, երբ դա կատարվում է դիտավորությամբ, այսինքն՝ պաշտոնատար անձի ակտիվների էական ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել»:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները և միջազգային առաջադեմ փորձի ուսումնասիրությունները՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում 2016 թվականի դեկտեմբերի 16-ին նախատեսվել է ապօրինի հարստացման հանցակազմը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները, և որը ողջամտորեն չի հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի

պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

2. Սույն հոդվածում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)»:

Այսպես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նախատեսվող՝ ապօրինի հարստանալը հանցակազմի վերլուծությունը հանգում է հետևյալին.

1. Ապօրինի հարստանալը հանցակազմի գործողությունը տարածվում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վրա: Այսինքն՝ հանցակազմի սուբյեկտ են դիտարկվում բարձրաստիճան պաշտոնատար անձը և նրա հետ փոխկապակցված անձը (բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը): Հարկ է նշել, որ հանցակազմի սուբյեկտների նման շրջանակի նախատեսումը պայմանավորված է նաև միջազգային փորձի ուսումնասիրությամբ (Լիտվա, Ռումինիա, Արգենտինա, Սլովակիա (քաղաքացիաիրավական հարթությունում), Ավստրալիա):

Վերոգրյալ մոտեցումը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի տրամաբանական շարունակությունն է, քանի որ օրենքը, որպես դիսկային խումբ, թիրախավորում է բարձրաստիճան պաշտոնատար անձին և նրա հետ փոխկապակցված անձանց:

2. Օրենսդրորեն թվարկվել են ապօրինի հարստացման հիմնական դրսևորումները՝ այդպիսով ապահովելով իրավական որոշակիության սկզբունքը:

Այսպես, ապօրինի հարստացման դրսևորումներն են՝

1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի գույքի ավելացումը և (կամ)

2) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները, և որը ողջամտորեն չի հիմնավորվում դրանցով:

3. Քննարկվող հանցակազմում էական չափը հստակեցնելու համար սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացվող 310.1-րդ հոդվածում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Ապօրինի հարստացման քրեականացման շեմի, այն է՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարի (արժեքի), նախատեսումը պայմանավորված է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության միջինացված տարբերակի ընտրությամբ: Հաշվարկի հիմքում դրվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի և նախարարության ոլորտում ծրագրեր իրականացնող գրասենյակի

բաժնի պետի գործակիցները, հաշվարկվել է նշյալ պաշտոնների համար տրվող աշխատավարձերի միջին թվաքանականը՝ նախատեսելով դա 6 ամսվա համար:

«Ապօրինի հարստացման» քրեականացումը, որը հաճախ անվանում են «անհամաչափ հարստություն» կամ «անբացատրելի հարստություն», պետություններին թույլ է տալիս, ի թիվս այլնի, հետապնդել կոռուպացված պաշտոնյաներին և բռնագրավել կոռուպցիոն եկամուտները՝ հիմնվելով այն բանի վրա, որ անբացատրելի հարստությունը կոռուպցիոն վարքագծի վկայությունն է:

Ապօրինի հարստացման համար դատապարտման հասնելու նպատակով, մեղադրող կողմը պետք է ապացուցի, որ պաշտոնյայի հարստացումը չի կարող արդարացվել եկամտի օրինական աղբյուրներից՝ հիմք ընդունելով, որ այն կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտ է: Պետական պաշտոնյան կարող է հերքել այս ենթադրությունը՝ ներկայացնելով իր հարստացման օրինական ծագման ապացույցները: Իսկ չհերքելու դեպքում հանգեցնում է դատապարտման և պատժի:

Ընդհանուր առմամբ կարծիք է ձևավորվել, որ, հաշվի առնելով կոռուպցիոն հանցագործությունների ապացուցելու դժվարությունը, հանրային շահերից է բխում, որ պետական պաշտոնյաները բացատրեն, թե ինչպես են ձեռք բերել իրենց հարստությունը: Այս տրամաբանությունից ելնելով՝ ապօրինի հարստացման քրեականացումը, ըստ էության, հիմնված է պայմանագրային պարտականությունների վրա, որոնք ստանձնում է պետական պաշտոնյան իր պաշտոնը ստանձնելիս: Սա բացատրում է, թե ինչու է պետական պաշտոնյան հանդիսանում այս հանցանքի հիմնական առարկան:

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան պահանջում է, որ մեղադրող կողմը հարստացումը ցույց տա «ակտիվների էական ավելացման» տեսանկյունից: Համաձայն ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի՝ «էական» բառը պահպանվել է այդ հատուկ դրույթում: Այս տարրը սահմանելիս կա երկու նկատառում՝ առաջինը՝ ինչպես որոշել, թե ակտիվների կամ հարստության ավելացումը «էական» է, և երկրորդը՝ որ ակտիվները կամ ապացույցները պետք է հաշվի առնել:

Միջազգային կոնվենցիաները և ազգային օրենսդրությունը «էական» սահմանում են ոչ թե որպես բացարձակ, այլ հարաբերական տերմին: Օրինակ՝ ակտիվների ավելացումը համեմատվում է եկամտի օրինական աղբյուրների հետ՝ օգտագործելով այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «անհամաչափ ակտիվներ», «օրինական եկամտին անհամարժեք ակտիվներ» կամ «համարժեքությունը գերազանցող» ակտիվներ: Երկրների մեծ մասը չի սահմանում այն, ինչն օրենսդրության մեջ համարվում է «անհամաչափ», այդպիսով թողնելով, որ դա որոշեն իրավապահ մարմինները:

Օրենսդրություններում ապօրինի հարստացման շեմ հստակեցնելը կարող է կանխել հետապնդումները, երբ համապատասխան չափը չնչին է: Այնուամենայնիվ, այն կարող է նաև ազդակ ուղարկել, որ որոշակի մակարդակի կոռուպցիոն վարքագիծը կհանդուրժվի, քանի դեռ շեմը չափազանց ցածր սանդղակ է սահմանում:

Որոշ երկրներում հնարավոր է, որ ցածր շեմերը հետապնդման չենթարկվեն՝ *de minimis non curat praetor* սկզբունքի համաձայն («օրենքը մանրուքներով հետաքրքրված չէ»), ինչը խոչընդոտում է մանր օրինազանցությունների հետապնդմանը: Նման մոտեցում է որդեգրել նաև ՀՀ օրենսդիր մարմինը՝ արձանագրելով գույքի ավելացման էական գերազանցման սանդղակը: ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածի իմաստով էական է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը:

ԳԼՈՒԽ 3.

ԿՈՌՈՒԿՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

§ 1. Կոռուպցիոն հանցագործությունների գործերով պարզաբանման ենթակա ընդհանուր հանգամանքները

Տեղին է մեկ անգամ ևս փաստել, որ կոռուպցիան, առաջին հերթին, խաթարում է պետական մարմինների բնականոն գործունեությունը, վնասում պետական իշխանության հեղինակությունը, ազդում պետության տնտեսական զարգացման վրա, իսկ որոշ դեպքերում նաև պայմաններ է ստեղծում այլ ծանր հանցագործությունների կատարման համար ու նպաստում անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը:

Յուրաքանչյուր ինքնիշխան պետության համար կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրը միշտ էլ արդիական է և դրա դեմ պայքարի գործում, անկասկած, առաջնային նշանակություն ունեն դրա կանխմանն ուղղված տարաբնույթ միջոցառումները: Միևնույն ժամանակ այս բնույթի հանցագործությունների դեմ պայքարի գործում շատ կարևոր է նման բնույթի քրեական գործի արդյունավետ քննությունն ու բացահայտումը, որն էլ պետք է սկսել այն հանգամանքների պարզաբանմամբ, որոնք ընկած են նմանաբնույթ հանցագործությունների կատարման հիմքում:

Կոռուպցիոն հանցագործությունների գործերով պարզաբանման ենթական հանգամանքները որևէ իրավական ակտում կամ տեսական գրականության մեջ ամփոփ ամրագրված չեն, ուստի նշվածի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ընդհանրացնել առանձին կոռուպցիոն հանցագործությունների գործերով պարզաբանման ենթակա հանգամանքները և համեմատական վերլուծության արդյունքում հասկանալ՝ որքանով են այդ հանգամանքները համապատասխանում մյուս կոռուպցիոն հանցագործություններին:

Կոռուպցիոն հանցագործությունների քննության ընթացքում, բացի ենթադրյալ իրավախախտման առկայության փաստը հաստատելու համար պահանջվող «ստանդարտ» հանգամանքների /հանցակազմի տարրերի/ պարզումից, կարևոր նշանակություն ունեն նաև այնպիսի էական նշանակություն ունեցող փաստական տվյալների հավաքագրումը և պարզումը, որոնք առանձնահատուկ են տվյալ հանցատեսակին, սակայն, այդուհանդերձ, ունեն որոշակի ընդհանրական գծեր: Մասնավորապես, նմանատիպ քրեական գործերով, որպես կանոն, պարզաբանման ենթակա են հետևյալ հանգամանքները.

- հանցագործության դեպքը, կատարման մեթոդը, տեղը և ժամանակը, մեխանիզմը, հանցագործության առարկան և դրա հատկանիշները, նպատակը և շարժառիթը,
- հանցագործությանը մասնակցած անձանց շրջանակը,

➤ ենթադրյալ հանցագործություն կատարած անձի՝ պաշտոնատար անձ հանդիսանալու հանգամանքը /<< քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում/,

➤ հանցագործության սուբյեկտի՝ պաշտոնատար անձի լիազորությունները սահմանող իրավական ակտերի առկայությունը, տեսակները, ընդունող մարմինները, գործողության մեջ դնելու կարգը և պայմանները, նման իրավական ակտերով պաշտոնատար անձանց տրված լիազորությունների տեսակները /սեփական, պատվիրակված/, շրջանակն ու ծավալը, պաշտոնատար անձի պաշտոնական դիրքի հետ կապված այլ առանձնահատկություններ,

➤ պաշտոնատար անձի գործողությունների և նրա պաշտոնական դիրքի միջև կապը,

➤ շահադիտական, անձնական այլ կամ խմբային շահի առկայությունը կամ բացակայությունը,

➤ արարքի նկատմամբ հանցավոր պաշտոնատար անձի սուբյեկտիվ վերաբերմունքի բացահայտումը, որն էական նշանակություն ունի պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները քրեական օրենքով պաշտպանվող այլ օբյեկտների դեմ կատարված ոտնձգություններից տարբերակելու համար,

➤ անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին վնաս պատճառող արարքի դրսևորման եղանակները,

➤ պաշտոնատար անձանց հակաիրավական գործողությունների արդյունքում անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված վնասի բնույթը, չափը, պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների և պատճառված վնասի միջև ուղղակի պատճառահետևանքային կապի առկայությունը,

➤ ենթադրյալ հանցանքն ուղղակի դիտավորությամբ կատարելու հանգամանքը և էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Նկատի ունենալով, որ կոռուպցիոն բնույթի որոշ հանցատեսակների դեպքում առանձնահատուկ են ենթադրյալ հանցանք կատարած անձանց կողմից ապօրինի վարձատրություն կամ նյութական օգուտ ստանալու դեպքերը, ուստի նախաքննության ընթացքում անհրաժեշտ է նաև միջոցներ ձեռնարկել նմանատիպ հնարավոր հանգամանքները պարզելու ուղղությամբ: Այդ առումով ենթադրյալ հանցանք կատարած անձանց գույքերի փաստացի պատկանելությունը պարզելու, դրանց ապօրինի ծագումը բացահայտելու ու նույնացնելու, այդ ուղղությամբ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննություն ապահովելու, ինչպես նաև նշված գույքերը պետությանը կամ համայնքին վերադարձնելու, հանցագործությամբ պատճառված վնասները վերականգնելու նպատակով, քննվող այն քրեական գործերով, որոնցով առերևույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել պաշտոնատար, առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ

այլ կառավարչական գործառույթներ իրականացնող կամ առևտրային կազմակերպություններում այլ պաշտոն զբաղեցնող կամ այլ անձի կողմից, պաշտոնեական դիրքն օգտագործելով, քրեական օրենքով արգելված արարք կատարելու և դրա արդյունքում խոշոր չափերի գույքային կամ տնտեսական օգուտ ստանալու կամ պետությանը, համայնքին վնաս պատճառելու, կամ՝ ՀՀ քրեական օրենքով արգելված գործունեությամբ զբաղվելու, շրջանառությունն արգելված իրեր, առարկաներ, միջոցներ ձեռք բերելու, պահելու, օգտագործելու, փոխանցելու, իրացնելու վերաբերյալ, գործի քննության ընթացքում անհրաժեշտ է՝

1. ստանալ քրեական գործով կասկածյալ/մեղադրյալ ներգրավված անձանց, նրանց մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները/ՏԵ՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի ԱՎԴ/0015/07/13 որոշումը/,

2. ստանալ քրեական գործով կասկածյալ/մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները,

3. ստացված բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների զննությամբ օտարերկրյա պետությունից գումարների մուտքերի կամ ելքերի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում նշված գործարքների հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց, դրա մասնակիցներին կամ բաժնետերերին պարզելու նպատակով, համապատասխան հարցմամբ, ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից ստանալ քննության համար նշանակություն ունեցող տեղեկություն, որից հետո տվյալ օտարերկրյա պետություն իրավական օգնության հարցում կատարելու միջոցով պարզել նշված հաշվեհամարի մուտքային և ելքային փոխանցումների վերաբերյալ քրեական գործի քննության համար նշանակություն ունեցող փաստական տվյալները,

4. գործում փաստական տվյալների առկայության դեպքում՝ իրավական օգնության հարցում կատարելու միջոցով պարզել տվյալ օտարերկրյա պետությունում ենթադրյալ հանցագործություն կատարած կամ նրա հետ փոխկապակցված անձանց սեփականության իրավունքով կամ փաստացի պատկանող, սակայն այլ անձանց անվամբ հաշվառված շարժական և անշարժ գույքի առկայությունը,

5. հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումն ապահովելու նպատակով կասկածյալի/մեղադրյալի կամ նրա հետ փոխկապակցված անձանց գույքերի վրա կալանք դնելու նպատակով իրավական օգնության հարցում կատարել համապատասխան օտարերկրյա պետություն,

6. ստանալ և քննության առարկա դարձնել գործով անցնող ենթադրյալ հանցանք կատարած անձանց, կասկածյալների/մեղադրյալների (եթե վերջիններս

հայտարարատու պաշտոնատար անձ են հանդիսացել) և նրանց հետ փոխկապակցված անձի/անձանց կողմից ներկայացված գույքի, եկամուտների հայտարարագրերը,

7. պարզել հանցագործություն կատարած կամ նրանց հանցակցած անձանց, նրանց մերձավոր ազգականները (ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսնու և ամուսնու ծնողները, վերջիններիս փեսաները և հարսները), ինչպես նաև մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող անձանց շրջանակը,

8. նախորդ կետում նշված անձանց անունով վերջին 10 տարվա ընթացքում ձեռք բերված, օտարված շարժական և անշարժ գույքերի (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված գույք, այդ թվում՝ կրիպտոակտիվներ) առկայության վերաբերյալ ՀՀ պետական իրավասու մարմիններից կատարել համապատասխան հարցումներ,

9. գույքերի առկայության դեպքում պարզել.

➤ վերջին 10 տարվա ընթացքում դրա փաստացի սեփականատերերի ընտանեկան դրությունը, զբաղմունքի տեսակը, հնարավոր եկամտի աղբյուրները, դրանց չափը,

➤ գույքերի արժեքը, ձեռքբերման աղբյուրը, գտնվելու վայրը, օտարման եղանակը, գինը, փաստացի տիրապետման եղանակը,

➤ գույքը դրա սեփականատիրոջ եկամուտներին համարժեք լինելու հանգամանքը,

➤ գույքի փոխակերպման կամ փոխանցման (գույքի անօրինական ծագումը թաքցնելու կամ քողարկելու) հանգամանքը,

10. ըստ անհրաժեշտության՝ ոստիկանության կամ ազգային անվտանգության մարմինների կողմից գործով անցնող ենթադրյալ հանցանք կատարած և/կամ նրանց հանցակցած, փոխկապակցված անձանց նկատմամբ անցկացնել «նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում», «հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում», «արտաքին դիտում» «ներքին» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

7-րդ և 9-րդ կետերում նշված հանգամանքների պարզման նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմիններին կարող են տրվել նաև համապատասխան հանձնարարություններ:

Բացի նշվածից, քրեական գործերի քննության ընթացքում ենթադրյալ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման, առանձին դեպքերում նաև պետության կամ համայնքի համար մեծածավալ գույքային վնաս (այդ թվում՝ եկամուտներ) առաջացնող ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հետ կապված հիմնավոր կասկածների վերաբերյալ փաստական տվյալների առկայության դեպքում փողերի լվացման հանցակազմը քննարկելու, զուգահեռ

Ֆինանսական քննություն իրականացնելու, փոխադարձ իրավական օգնության շրջանակներում համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմիններից որպես ապացույց տեղեկություններ ձեռք բերելու նպատակով (օրինակ՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից, պաշտոնեական դիրքն օգտագործելով, խարդախություն, յուրացում, վատնում կատարելու, առևտրային կաշառք ստանալու, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, անցնելու, պաշտոնեական կեղծիք կատարելու, կեղծ փաստաթղթեր իրացնելու կամ ՀՀ քրեական օրենքով արգելված գործունեությամբ զբաղվելու, շրջանառությունն արգելված իրեր, առարկաներ, միջոցներ ձեռք բերելու, պահելու, օգտագործելու, փոխանցելու, իրացնելու և դրանց արդյունքում հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարները բանկային փոխանցումներով այլ անձանց փոխանցումների արդյունքում դրանց հանցավոր ծագումը խեղաթյուրվել է, այլ կերպ ասած՝ բարդ սխեմաների կիրառմամբ բանկային համակարգում առկա հաշվեհամարների օգտագործմամբ, քողարկման, մասնատման արդյունքում օրինականացվել են հանցավոր ճանապարհով ստացված գումարներ), պետք է ապահովել, որպեսզի ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից համապատասխան հարցմամբ ստացվեն տեղեկություններ (օրինակ՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի անվամբ ՀՀ բանկերում հաշվարկային հաշիվների առկայության վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ դրանց շարժն ու հաշվեհամարների մնացորդը, ենթադրյալ հանցանք կատարած անձին գումարներ փոխանցած, ինչպես նաև նրանից գումարներ ստացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշվետերերի, գումարի հետագա տնօրինման մանրամասների վերաբերյալ տվյալներ, ՀՀ բանկերում նրա անվամբ պահախցերի առկայության վերաբերյալ տվյալներ, կամ նրա հետ փոխկապակցված անձանց և ընկերությունների անուններով՝ ՀՀ բանկերում հաշվարկային հաշիվների առկայության, դրանց շարժի ու հաշվեհամարների մնացորդի վերաբերյալ տվյալներ և այլ):

Քրեական գործերի քննության ընթացքում անհրաժեշտ է ապահովել նաև համագործակցությունը օտարերկրյա պետության իրավասու մարմինների հետ, գործի համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին», «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին», «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ», «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիաներով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով տեղեկության տրամադրման հարցում ուղարկել համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմիններին:

§ 2. Կոռուպցիոն հանցագործությունների քննության սկզբնական փուլի առանձնահատկությունները

Կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով քննություն կատարելիս կարևոր նշանակություն ունի նաև քրեական գործի նախաքննության պլանավորումը: Այդ առումով պետք է առանձնացնել քրեական վարույթի սկզբնական փուլում, երբեմն նաև հրատապ ու անհապաղ կատարման ենթակա քննչական և դատավարական գործողությունները, ապա՝ քրեական գործի նախաքննության բազմակողմանիությունը, օբյեկտիվությունը, լրիվությունն ապահովելուն ուղղված քննչական և դատավարական գործողությունների կատարումը: Այս տարանջատման հիմքում դրված է ենթադրյալ հանցանքը կատարվելուց կամ իրավապահ մարմիններին հայտնի դառնալուց անմիջապես հետո պատշաճ դատավարական ընթացակարգերի պահպանմամբ այնպիսի նվազագույն փաստական տվյալների հավաքագրման, ամրագրման, մշակման և հետագա քննչական ու դատավարական գործողությունների պլանավորման սկզբունքը, որը հնարավորություն կտա վարույթն իրականացնող մարմնին միջոցներ ձեռնարկելու ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից հանցանքի հետքերը թաքցնելուն, կեղծելուն, փոփոխելուն ուղղված և, առհասարակ, հանցագործության բացահայտմանը որևէ կերպ խոչընդոտող գործողությունների կատարման իրական վտանգը չեզոքացնելու ուղղությամբ:

Քննչական պրակտիկան ցույց է տվել, որ որոշ դեպքերում կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով նախաքննության սկզբնական փուլում կատարված քննչական և դատավարական գործողությունների արդյունքում հնարավոր է եղել ապահովել հանցագործության լիարժեք բացահայտումը, իսկ նախնական փուլում ձեռք բերված փաստական տվյալները հիմք են ծառայել հետագա գործողությունների պատշաճ պլանավորման համար: Ըստ այդմ, կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով քրեական գործերով առաջնահերթ կատարման են ենթակա հետևյալ քննչական և դատավարական գործողությունները.

1. ենթադրյալ հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձի հարցաքննություն, որի ընթացքում անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները՝

➤ կատարված հանցանքի մասին հնարավոր բոլոր տեղեկությունները՝ հանցանքի կատարման տեղը, ժամը, իրադրությունը, ակննատես կամ այլ կերպ տեղեկությունների տիրապետող անձանց շրջանակը, ենթադրյալ հանցանք կատարած անձի ինքնությունը, նկարագիրը, հնարավոր գտնվելու վայրը, կապը քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ տեղեկությունների տիրապետող այլ անձանց հետ, նրանց վրա ազդեցություն գործադրելու հավանականությունը,

➤ հանցանքի մասին տեղեկությունների ստացման աղբյուրը,

➤ ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ նրա մերձավորների հետ ունեցած փոխհարաբերությունները, միջանձնային կոնֆլիկտների կամ այլ տարածայնությունների առկայությունը,

➤ ենթադրյալ հանցանք կատարած անձին նույնացնող փաստական տվյալները՝ աշխատավայր, պաշտոն, բնակության վայր, հեռախոսահամարներ, անձնական կամ ծառայողական մեքենա, մտերիմների շրջանակ և այլն,

➤ ենթադրյալ՝ հանցագործության կատարման եղանակը, դրա կատարման արդյունքում թողնված հնարավոր նյութական հետքերը և դրանց գտնվելու վայրը.

2. հանցագործության վայրի զննություն, եթե ենթադրյալ հանցանքի բնույթը ենթադրում է դեպքի վայրի առկայություն, ընդ որում, նպատակահարմար է զննությունն իրականացնել անհապաղ.

3. ականատես կամ այլ կերպ դեպքի մասին տեղեկություններ ստացած վկաների հարցաքննություններ.

4. այն հիմնարկի աշխատակիցների հարցաքննություններ, որտեղ աշխատում է ենթադրյալ հանցանք կատարած անձը /գործի հանգամանքներով պայմանավորված նրանք կարող են գրավոր նախազգուշացվել նախաքննության տվյալներն առանց քննիչի կամ դատախազի թույլտվության հրապարակելու համար << քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կարող են հարցաքննվել քննության առավել վաղ փուլում՝ մինչև դեպքի վերաբերյալ տեղեկությունների տիրապետող այլ անձանց հարցաքննությունները/.

5. հանցագործության դեպքին վերաբերող պաշտոնական կամ այլ փաստաթղթերի շրջանակի որոշում, ապա՝ դրանց առգրավում և հնարավորինս սեղմ ժամկետներում զննություն /գործի կոնկրետ հանգամանքներով պայմանավորված կարող է առաջանալ նաև փաստաթղթերի զննումից բխող և դրանով պայմանավորված քննչական կամ դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտություն, օրինակ՝ լրացուցիչ փաստաթղթերի առգրավում, զննություն, հարցում և այլն/.

6. հանցագործության բացահայտման համար նշանակություն ունեցող առարկաներ հայտնաբերելու նպատակով խուզարկություններ /առանձնահատուկ կարևորություն ունի մեկից ավելի օբյեկտներում խուզարկություններ կատարելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում դրանց տեղակայման հասցեների անհապաղ պարզումն ինչպես օպերատիվ, այնպես էլ ապահով, ինֆորմացիայի արտահոսք չենթադրող քննչական և դատավարական գործողությունների կատարման միջոցով, ապա, դատարանի համապատասխան որոշման առկայության դեպքում, մեկից ավելի օբյեկտներում միաժամանակյա խուզարկությունների կատարում՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների մասնակցությամբ/:

Եթե թվարկված քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման արդյունքում պարզվում է ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ

անձանց ինքնությունը, ապա, կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալուց հետո, անհրաժեշտ է նրանց հարցաքննել կասկածանքի կամ մեղադրանքի շուրջ՝ խուսափելով քննությանը հայտնի այնպիսի հանգամանքների վերաբերյալ ուղղակի կամ անուղղակի կերպով հարցադրումներ կատարելուց, որոնք վերջինիս կողմից կարող են ենթարկվել ազդեցության՝ կորցնելով քրեական գործի համար ապացուցողական նշանակությունը /օրինակ՝ նպատակահարմար չէ կասկածյալին կամ մեղադրյալին հարցադրումներ կատարել դեռևս չառգրավված ու զննության չենթարկված, սակայն նրա կողմից հանցանքի կատարումը վկայող փաստաթղթերի մասին, որոնց վերաբերյալ քննությանը հայտնի է այլ աղբյուրից, քանի որ այդպիսիք կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կարող են թաքցվել կամ ոչնչացվել/:

Կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ ստացած անձանց հարցաքննություններն անհրաժեշտ է իրականացնել նրանց պաշտպանության իրավունքի ապահովմամբ՝ հետագայում նրանց կողմից տրված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունը վիճարկելուց խուսափելու նպատակով:

Բացի վերը նշվածից, պայմանավորված կոնկրետ քրեական գործի առանձնահատկություններով կամ տիպային իրավիճակով, կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով քրեական գործերի քննության սկզբնական փուլում անհապաղ կարող են կատարվել նաև այլ քննչական և դատավարական գործողություններ:

Օրինակ.

➤ որոշ տիպային իրավիճակներում ենթադրյալ հանցանք կատարած անձին կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալուց հետո, հնարավորինս սեղմ ժամկետում, պետք է ապահովել նրանց դեմ ցուցմունք տված անձանց հետ առերես հարցաքննությունների կատարումը /քննության սկզբնական փուլում պատշաճ դատավարական ընթացակարգերի պահպանմամբ կատարված առերեսումների արդյունքում հնարավոր է լինում ստանալ և ամրագրել «անխոցելի» ապացույցներ, ինչն էականորեն հեշտացնում է քննության հետագա ընթացքը, բացի այդ, քննության սկզբնական փուլում առերեսումներ կատարելու արդյունքում հնարավոր է լինում արձանագրել առավել օբյեկտիվ և իրական ցուցմունքներ՝ կապված կասկածյալի, մեղադրյալի կամ նրանց հետ փոխկապակցված այլ անձանց կողմից վկաների հետ համատեղ դիրքորոշումներ մշակելու կամ նրանց կողմից տրվելիք ցուցմունքների բովանդակության վրա այլ կերպ ազդելու՝ ժամանակային հնարավորության բացակայության հետ/,

➤ քրեական գործի կոնկրետ փաստական հանգամանքներով պայմանավորված՝ կարող է կատարվել նաև կասկածյալի կամ մեղադրյալի ճանաչում /տվյալ քննչական գործողության կատարումը քննության սկզբնական փուլում նույնպես կարևոր նշանակություն ունի՝ ճանաչողի կողմից տրվելիք ցուցմունքի բովանդակության վրա կասկածյալի, մեղադրյալի կամ նրանց հետ

փոխկապակցված անձանց կողմից հնարավոր ազդեցությունը բացառելու նպատակով/

➤ քրեական գործի նախաքննության նպատակահարմարությունից ելնելով՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից կարող է քննարկվել նաև պաշտոնատար անձ հանդիսացող և հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելու, ինչպես նաև մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելու հարցը, որը հնարավորություն կտա ապահովելու նրա պատշաճ վարքագիծը մինչդատական քրեական վարույթի ընթացքում,

➤ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքների պարզաբանման նպատակով հետաքննության մարմիններին կարող է տրվել գրավոր հանձնարարություն՝ անհրաժեշտության դեպքում այդ մարմիններին տրամադրելով նաև քրեական գործի նախաքննության ընթացքում հայտնի դարձած առանձին տեղեկություններ,

➤ մեղադրյալի բանկային գաղտնիք կազմող փաստաթղթերի առգրավում կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցել առաջին ատյանի դատարան,

➤ մեղադրյալի կամ այլ անձանց կողմից գործածվող բջջային հեռախոսահամարներից կայացած հեռախոսազանգերի, հեռախոսահամարների պատկանելության և դրանք սպասարկած ալեհավաք կայանների տեղակայման վայրերի վերաբերյալ վերձանումներ ստանալու թույլտվություն ստանալու միջնորդություններ ներկայացնել առաջին ատյանի դատարան,

➤ կասկածյալի, մեղադրյալի և հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցությունները լսելու և ձայնագրառելու թույլտվություն ստանալու միջնորդություն ներկայացնել դատարան,

➤ անազատության մեջ չգտնվող մեղադրյալի նկատմամբ կարող են իրականացվել օպերատիվ-հետախուզական այլ միջոցառումներ ևս /ներքին կամ արտաքին դիտում/:

§ 3.Քննության հետագա փուլի քրեադատավարական և կրիմինալիստիկական առանձնահատկությունները

Կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի նախաքննության սկզբնական փուլում արդյունավետ, փոխկապակցված քննչական և դատավարական գործողությունների կատարման արդյունքում հնարավոր է լինում ստանալ այնպիսի փաստական տվյալների համակցություն, որոնք քննության հետագա փուլերում համադրելով գործի քննությամբ ստացված այլ տվյալների համակցությամբ, վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն է ստանում լուծելու քրեական գործի վերջնական ընթացքը:

Որպես կանոն քննության սկզբնական փուլում ձեռք բերված փաստական տվյալները քննության հետագա փուլերի ընթացքում մշակվում են, առավել մանրակրկիտ ձևով վերլուծվում, դրանց ռաումնասիրությամբ ի հայտ եկած առանձին տվյալների հաստատման նպատակով դատավարական ընթացակարգերի կիրառմամբ կատարվում են անհրաժեշտ լրացուցիչ այլ քննչական կամ դատավարական գործողություններ:

Կոռուպցիոն հանցագործությունների գործերով քննության արդյունավետությունն ապահովելու նպատակով կարևոր է քննության սկզբնական փուլում ստացված տվյալների հիման վրա հետագա քննչական և դատավարական գործողությունների պլանավորված կատարումը՝ այն իրականացնելով այնպիսի գործիքակազմի կիրառմամբ և միջոցների հաջորդականությամբ, որը կապահովի պլանավորված վերջնարդյունքը: Ըստ այդմ, քրեական գործի քննության հետագա փուլերում կարող են կատարվել հետևյալ քննչական և դատավարական գործողությունները.

1. քրեական գործի քննության սկզբնական փուլում կատարված խուզարկությունների արդյունքում վերցված կամ առգրավված նյութական օբյեկտների զննում, դրանց վրա առկա և քրեական գործի քննության համար նշանակություն ունեցող հետքերի ամրագրում,

2. համապատասխան ելակետային տվյալներ ստանալուց անմիջապես հետո համապատասխան փորձաքննությունների նշանակում /երբեմն փորձաքննությունների նշանակումը պետք է կատարել քրեական գործի քննության հենց սկզբում՝ պայմանավորված կոնկրետ գործի փաստական հանգամանքներով: Օրինակ՝ կաշառք ստանալու դեպքում, կաշառքի առարկայի առկայության պայմաններում, նպատակահարմար է փորձաքննությունները նշանակել դեպքը բացահայտվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում/,

3. քրեական գործի կոնկրետ փաստական հանգամանքներով պայմանավորված՝ կատարել ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/՝ ծառայողական օգտագործման համար տրամադրված, ինչպես նաև անձնական համակարգիչների առգրավում, մասնագետի մասնակցությամբ նախնական զննության ենթարկել դրանք, ապա նշանակել դատահամակարգչատեխնիկական փորձաքննություն /երբեմն կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ կողմից գործածվող բջջային հեռախոսների առգրավումը քննության սկզբնական փուլում, դրանք զննելու, ապա նաև փորձաքննություն նշանակելու նպատակով փորձագետին հանձնելու թույլտվություն ստանալու համար համապատասխան միջնորդություն ներկայացնելը և բավարարվելու դեպքում համապատասխան մասնագետի մասնակցությամբ նախնական զննության իրականացումը՝ գործին վերաբերող գրառումներ, հաղորդագրություններ, լուսանկարներ և այլ տեղեկություն հայտնաբերելու նպատակով/,

4. ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ գույքային դրության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում /հարցումներ ՀՀ ոստիկանության

«Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, իրավաբանական անձանց պետական ռեգիստր և այլն, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ հանձնարարություններ հետաքննության մարմիններին, վկաների հարցաքննություններ և այլն/, ընդ որում անհրաժեշտ է պարզել ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ մերձավոր ազգականների (ծնողներ, զավակներ, որդեգրողներ, որդեգրվածներ, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրներ և քույրեր, պապ, տատ, թոռներ, ինչպես նաև ամուսնու ծնողներ, վերջիններիս փեսաներ և հարսներ), մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող անձանց շրջանակը, նրանց անվամբ հանցանք կատարած անձի/անձանց/ կողմից նյութական միջոցներ գրանցելու, նրանց մոտ պահելու հանգամանքները,

5. կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հարցման կամ հանձնաժողովի պաշտոնական համացանցային էջի զննությամբ պարզել ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունենալու հանգամանքը, առկայության դեպքում ստանալ/ներբեռնել/ ներկայացված հայտարարագրերը, զննության ենթարկել դրանք և դրանցով պայմանավորված կատարել անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ,

6. քննության սկզբնական փուլում ստացված բանկային գաղտնիքի զննությամբ ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ կողմից օտարերկրյա պետություններում կամ գոտիներում գտնվող, գործող բանկային, վարկային կամ ֆինանսական այլ կազմակերպություններին դրամական միջոցներ փոխանցված լինելու դեպքերում, իրավական օգնության հարցումներ ուղարկել տվյալ պետությունների իրավապահ մարմիններին,

7. կատարել ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ սահմանահատումների վերաբերյալ հարցում ՀՀ իրավասու մարմիններին,

8. քրեական գործի փաստական հանգամանքներով պայմանավորված /օրինակ՝ պաշտոնեական կեղծիքի հանցակազմերի դեպքում/ համապատասխան քննչական և դատավարական գործողությունների միջոցով պարզել քննության համար նշանակություն ներկայացնող փաստաթղթի կազմման, լրացման, շրջանառության մեջ դնելու կարգը սահմանող իրավական ակտերի առկայությունը, առանձնահատկությունները, փաստաթուղթը պաշտոնեական ռեկվիզիտներով օժտված լինելու, իրավաբանական նշանակության փաստեր հաստատելու, իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու լիազորություններ սահմանելու հանգամանքները,

9. քրեական գործով անհրաժեշտություն առաջանալու դեպքում կատարել քննչական փորձարարություն,

10. իրականացնել բջջային հեռախոսահամարներից կատարված ելքային և մուտքային հեռախոսազանգերի, այդ ընթացքում հեռախոսահամարները սպասարկած ալեհավաք կայանների տեղակայման վայրերի և սպասարկման տարածքների վերաբերյալ ստացված տեղեկատվության զննություն և դրանցով

պայմանավորված այլ քննչական ու դատավարական գործողություններ /որոշ դեպքերում կարող է ապացուցողական նշանակություն ունենալ նաև բջջային հեռախոսազանգերի վերծանումների համադրված զննումն այլ տվյալների հետ/:

Հարկ է նշել, որ թվարկված քննչական և դատավարական գործողությունների ցանկը և կատարման հաջորդականությունը սպառիչ թվարկել հնարավոր չէ և, յուրաքանչյուր քրեական գործի կոնկրետ հանգամանքներով պայմանավորված, կարող է առաջանալ ինչպես թվարկված գործողությունների ցանկի մեջ չմտնող, այնպես էլ իրադրությամբ պայմանավորված տարբեր հաջորդականությամբ քննչական և դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտություն:

ԳԼՈՒԽ 4

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Փաստաթղթերի հետ տարվող աշխատանքը

Կոռուպցիոն հանցագործությունների գործերով նախաքննություն իրականացնելիս հաճախ ապացույցների հիմնական աղբյուր են հանդիսանում համապատասխան փաստաթղթերը: Ուստի, նմանատիպ դեպքերում անհրաժեշտ է ապահովել փաստաթղթերի անհապաղ առգրավումը /քրեադատավարական ընթացակարգերի պահպանմամբ այլ եղանակով ստացումը/, քրեական գործի նյութերին կցելը, քննության սկզբնական փուլում զննության ենթարկելը, ապա քննության հետագա պլանավորումը՝ ըստ փաստաթղթերի զննության արդյունքների:

Գործնականում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ անցնելու վերաբերյալ քրեական գործեր քննելիս բացահայտվում են նաև հիշյալ առերևույթ հանցագործությունների հետ փոխկապակցված պաշտոնեական կեղծիք կատարելու հանցակազմեր: Նման դեպքերում առավել քան անհրաժեշտ է հրատապության սկզբունքով ապահովել ենթադրյալ կեղծված փաստաթղթերի ստացումը, զննումը և համապատասխան /օրինակ՝ դատաձեռագրաբանական, դատափաստաթղթաբանական/ փորձաքննությունների նշանակումը: Ընդ որում, պայմանավորված քննության առանձնահատկություններով, երբեմն նպատակահարմար է լինում զննությունն իրականացնել տվյալ կազմակերպության տեղակայման վայրում և աշխատակցի մասնակցությամբ, ինչի շնորհիվ ավելի ընդգրկուն տեղեկություն կարող է ստացվել քրեական գործով պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ:

Քննարկվող հանցագործությունների դեպքում երբեմն հանդիպում են նաև պաշտոնատար անձանց կողմից հատկապես հաշվապահական հաշվառման փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ պարունակող գրառումներ կատարելու, կեղծ հաշվարկային փաստաթղթեր պատրաստելու, օգտագործելու և նմանատիպ այլ դեպքեր: Այս առանձնահատկություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում հիշյալ փաստաթղթերը ոչ միայն անհապաղ ստանալ, այլև դրանք զննել համապատասխան ոլորտի մասնագիտական գիտելիքների տիրապետող անձանց մասնակցությամբ, հնարավորության և անհրաժեշտության դեպքում՝ քրեական գործով վարույթին ներգրավել մասնագետ, ինչը կարևոր նշանակություն կարող է ունենալ հետագայում դատատնտեսագիտական/հաշվապահական/ կամ այլ փորձաքննություններ նշանակելիս:

Փաստաթղթերի հետ աշխատանքի ընթացքում կարևոր նշանակություն ունի վարույթն իրականացնող քննիչի մասնագիտական պատրաստվածությունը, արհեստավարժությունը և նախկինում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն կատարած լինելու հանգամանքը: Նշվածը հատկապես կարևոր է, կոնկրետ հանցագործության դրսևորման առանձնահատկություններով պայմանավորված, ստացման, զննության ենթակա և այլ քննչական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի շրջանակը որոշելիս: Ասվածի վկայությունը այն հանգամանքն է, երբ մասնագիտական արհեստավարժության և նախկինում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով քրեական գործերով նախաքննություն իրականացրած քննիչը քննության սկզբնական փուլում ընտրում և առգրավում կատարելու միջոցով ստանում է գործի բացահայտման համար անհրաժեշտ թիրախային փաստաթղթերը՝ այդպիսով ապահովելով նաև այլոց կողմից այդ փաստաթղթերի ոչնչացումը և վարույթն իրականացնող մարմնին տրամադրելուց խուսափելը, իսկ մեկ այլ դեպքում մասնագիտական փորձառության պակասի պատճառով վարույթն իրականացնող քննիչը չի կատարում գործի բացահայտման համար կենսական նշանակություն ունեցող փաստաթղթերի առգրավում՝ այդպիսով փակուղային իրավիճակ ստեղծելով քննության հետագա ընթացքի համար:

Այս համատեքստում պետք է նշել, որ պետք է խուսափել նաև «ամեն ինչ առգրավելու» արատավոր պրակտիկայից, երբ վարույթի սկզբնական փուլում առգրավվում են կազմակերպության գրեթե բոլոր փաստաթղթերը՝ իրական ճգնաժամի մեջ դնելով տվյալ կազմակերպության հետագա գործունեությունը: Բացի այդ, չարդարացված մեծ ծավալի փաստաթղթեր առգրավելու արդյունքում հապաղում է նաև գործի քննությունը, ինչն ուղղակիորեն կապված է ստացված փաստաթղթերի ուսումնասիրման և քրեական գործի նախաքննության համար պիտանիության աստիճանի որոշման անհրաժեշտության և ժամանակատար լինելու հանգամանքների հետ: Հետևաբար, նման խնդիրներից խուսափելու լավագույն միջոցը քրեական գործերի նախաքննության կատարումն արհեստավարժ քննիչի կամ քննիչների խմբին հանձնարարելն է:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների գործերով որակյալ և արդյունավետ քննություն կատարելու համար, սկսնակ քննիչներին հատուկ մասնագիտական գիտելիքներ փոխանցելու նպատակով, նպատակահարմար է նրանց ընդգրկել արհեստավարժ քննիչներից կազմված խմբում, որոնց անմիջական հսկողությամբ էլ փորձառության պակաս ունեցող քննիչները կարող են կատարել առանձին քննչական և դատավարական գործողություններ:

Կարևոր նշանակություն ունի նաև առանձին փաստաթղթերի հետ աշխատելիս էական նշանակություն ունեցող առանձնահատկությունների ամրագրումը: Այսպես, հաշվապահական բնույթի փաստաթղթեր առգրավելու անհրաժեշտության դեպքում էական նշանակություն ունի ընթացիկ հաշվապահական և բանկային, առևտրային կամ ապահովագրական գաղտնիք

պարունակող փաստաթղթերի տարանջատումը և դրանցից յուրաքանչյուրը առգրավելու կամ զննության ենթարկելու՝ օրենսդրական պահանջների պահպանումը:

§ 2. Վկաների հարցաքննությունը

Շատ կարևոր է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերով վկաների հարցաքննությունների պլանավորումը: Այդ անհրաժեշտությունը պայմանավորված է վկաների՝ հիմնականում նույն կազմակերպությունում աշխատելու, հետևաբար՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ հետ ենթակայության կամ գործընկերային փոխհարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքով: Ուստի, վկաների հարցաքննությունն անհրաժեշտ է պլանավորել այնպիսի հաջորդականությամբ և հարցադրումների մշակմամբ, որը հնարավորություն կտա չեզոքացնելու ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ հետ ենթակայության կամ գործընկերային փոխհարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքով պայմանավորված ոչ իրական ցուցմունքներ տալու հավանականությունը: Այդ առումով քննության սկզբնական փուլում նպատակահարմար է իրականացնել մի քանի վկաների միաժամանակյա հարցաքննություններ քրեական գործով կազմված քննչական խմբի քննիչների կողմից՝ հարցաքննությունների ընթացքում պարզաբանման ներկայացվող հարցերի շրջանակը նախապես քննարկելով և համաձայնեցնելով միմյանց հետ: Նպատակահարմար է նաև հարցաքննությունների ավարտից հետո ստացված տեղեկությունն անհապաղ ամփոփել ու ըստ անհրաժեշտության կատարել լրացուցիչ կամ առերես հարցաքննություններ: Կարևոր նշանակություն ունի նաև այս փուլում ենթադրյալ հանցանք կատարած պաշտոնատար անձանց և վկաների առերես հարցաքննությունների անհապաղ կազմակերպումը: Նման օպերատիվությունը կարող է ապահովել գործով արժանահավատ ապացույցների ստացումը, ինչպես նաև բացառել վկաների կողմից համատեղ դիրքորոշում մշակելու և ենթադրյալ հանցանք կատարած պաշտոնատար անձին ձեռնտու ցուցմունքներ տալու հնարավորությունը:

Վկաների հարցաքննությունների ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նրանց մի մասը պաշտոնատար անձի կամ վերջինիս հետ փոխկապակցված անձի/անձանց/ հետ կարող են գտնվել մտերիմ կամ թշնամական փոխհարաբերությունների մեջ, որպիսի հանգամանքը կարող է կանխորոշել նրանց կողմից տրվող ցուցմունքների բովանդակությունը: Նմանատիպ դեպքերում վճռորոշ դեր է ունենում վարույթն իրականացնող քննիչի մասնագիտական պատրաստվածությունը, արհեստավարժությունը:

Կարևոր է նաև նշել, որ քննարկվող հանցագործությունների քննության ընթացքում արդյունավետ կարող է լինել քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումների համադրված իրականացումը: Օրինակ՝ վկաների

հարցաքննության իրականացումը պաշտոնատար անձի նկատմամբ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում», «Ներքին դիտում» կամ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներից որևէ մեկի իրականացմանը զուգահեռ, ինչը հնարավորություն կտա ստանալու առավել ընդգրկուն և օբյեկտիվ տեղեկություն քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ:

Պրակտիկան ցույց է տվել, որ այս դեպքում առավել արդյունավետ է քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումների համատեղ իրականացումը նախաքննության սկզբնական փուլում, երբ դեռևս ենթադրյալ հանցանք կատարած պաշտոնատար անձը կամ վկաները չեն կարող կանխատեսել իրենց նկատմամբ իրականացվող ՕՀ միջոցառումների առկայությունը, դրանով պայմանավորված խիստ նվազ է նաև այդ փուլում համատեղ դիրքորոշումներ մշակելու հավանականությունը:

Վկաների հարցաքննություններն իրականացնելիս կարևոր նշանակություն ունի նաև հարցադրումների մշակումը, նշված քննչական գործողության մանրակրկիտ պլանավորումը: Ընդ որում, ցանկալի չէ ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ ենթակայությամբ աշխատող վկաներին հարցաքննելիս տալ հանցանքի կատարմանը վերաբերող, տվյալ պահին վարույթն իրականացնող մարմնին հայտնի այնպիսի տեղեկությունների շուրջ հարցեր, որոնք կարող են վերջինիս կողմից հանրայնացվել, կեղծվել, թաքցվել կամ ենթարկվել այլ անօրինական ազդեցության:

Հարկ է նշել, որ կոռուպցիոն հանցագործությունների գործերով վկաների հարցաքննությունները նպատակահարմար է կատարել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրում, ավելի ստույգ՝ քննիչի աշխատասենյակում, բացառությամբ այն հրատապ և անհետաձգելի դեպքերի, երբ չնչին հապաղումը կարող է բերել վկայի հարցաքննությամբ ստացման ենթակա ապացույցի կորստի: Վկաների հարցաքննությունների ժամանակ անհրաժեշտ է շեշտադրում կատարել տվյալ քննչական գործողության հոգեբանական բաղադրիչի վրա՝ փորձելով հոգեբանական շփման մեջ մտնել հարցաքննվողի հետ՝ այդպիսով ստեղծել վստահության և համագործակցային մթնոլորտ:

Նպատակահարմար չէ հարցաքննության ընթացքում ենթադրյալ հանցանք կատարած անձի/անձանց/ կամ նրա հետ աշխատող անձանց պախարակելը, նրանց գործողությունները կամ անգործությունն այլ կերպ անվանարկելը, ինչը կարող է հանգեցնել հարցաքննվողի կողմից քննության համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկություն տրամադրելուց աննկատ հրաժարվելուն: Վկաների հարցաքննության ընթացքում նշանակություն կարող է ունենալ նաև վարույթն իրականացնող քննիչի կողմից «ոչ պաշտոնական» միջավայրի ստեղծումը, ինչը հարցաքննվողի մոտ կառաջացնի վստահության զգացողություն, ուստի կնպաստի նաև քննչական գործողության արդյունավետության բարձրացմանը: Վկաների կողմից քրեական գործով պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ ապացուցողական նշանակություն ունեցող

ցուցմունքներ տալու դեպքում կարևոր է նաև այդ կապակցությամբ էական հակասություններ ենթադրող ցուցմունքներ տված անձանց հետ անհապաղ կամ ողջամիտ ժամկետներում առերեսումներ կատարել:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերը սովորաբար բազմադրվագ են, ուստի հարցաքննությունների ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքների շրջանակը նույնպես ընդգրկուն է: Այս առումով կարևոր է վկաների հարցաքննությունից առաջ տվյալ քննչական գործողությանը նախապատրաստվել: Մասնավորապես, հարցաքննությունից առաջ քննիչը պետք է որոշի պարզաբանման ենթակա հանգամանքների շրջանակը, ձեռք բերի վկայի մասին բավարար տեղեկություններ՝ քրեական գործով պարզաբանման ենթակա հանգամանքների մասին նրա կողմից տեղեկացված լինելու աղբյուրների, դրանց հավաստիության, վկայի պաշտոնական դիրքի և լիազորությունների շրջանակի, ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ հնարավոր առնչության և այլ հարցերի վերաբերյալ: Նման տեղեկության ձեռքբերումը քննիչին կարող է օգնել պլանավորել հարցաքննության ծավալը, տևողությունը և բովանդակությունը:

Վկաների հարցաքննության պլանավորումը կարող է լինել բանավոր կամ գրավոր, սակայն, քննարկվող հանցագործությունների առանձնահատկություններից ելնելով, առավել նպատակահարմար է վկաների հարցաքննության պլանավորումը կատարել գրավոր, առավել ևս, երբ հարցաքննությունների ընթացքում վկաներին կարող են առաջադրվել տարբեր իրավական ակտերով սահմանված տարբեր իրավակարգավորումների վերաբերյալ հարցադրումներ և այդ ծավալի տեղեկություն վարույթն իրականացնող քննիչը պարզապես կարող է չմտապահել, արդյունքում հարցաքննությունն իրականացնել թերի և ոչ արդյունավետ:

§ 3. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության առանձնահատկությունները

Ինչպես վկաների հարցաքննության, այնպես էլ կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության դեպքում ևս, նպատակահարմար է նախապես գրավոր կարգով պլանավորել տվյալ քննչական գործողության կատարումը: Ընդ որում, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ կոռուպցիոն հանցագործությունների գործերով նման դատավարական կարգավիճակում հիմնականում հայտնվում են պաշտոնատար անձինք, հետևաբար նրանք ունեն բավականին բարձր սոցիալական դիրք, ինտելեկտուալ մակարդակ, զարգացվածության և գրագիտության աստիճան: Նման պայմաններում առավել քան նպատակահարմար է մինչև հարցաքննությունը սկսելը հնարավոր բոլոր քրեադատավարական միջոցներով հավաքագրել ենթադրյալ հանցագործությանն առնչվող տեղեկությունները, հստակ սահմանազատել կասկածյալի կամ մեղադրյալի գործողությունների շրջանակը, ապա դրանց հաշվառմամբ մշակել առաջադրման ենթակա հարցադրումները:

Տակտիկական տեսանկյունից կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննության ընթացքում վարույթն իրականացնող քննիչը կարող է բավարարվել բացառապես տեղեկություն ստանալու դիրքերից և ձեռնպահ մնալ հարցաքննվողին քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների մասին բացահայտող, հուշող հարցեր առաջադրելուց: Սակայն բավարար ապացուցողական բազա ունենալու դեպքում վարույթն իրականացնող քննիչը կարող է կասկածյալին կամ մեղադրյալին առաջադրել նաև մերկացնող, վերջինիս համար փակուղային հանդիսացող, ինչպես նաև այնպիսի հարցադրումներ, որոնց պատասխանների կամ դրանց ստուգման արդյունքում ստացված տեղեկությունների վերլուծությամբ կասկածյալի կամ մեղադրյալի ցուցմունքը կարող է դիտարկվել որպես ոչ արժանահավատ:

Կարևոր է կասկածյալի կամ մեղադրյալի մոտ այն գիտակցման սերմանումը, որ, անկախ իր կողմից խոստովանական ցուցմունքներ տալու կամ չտալու հանգամանքից, քրեական գործով արդեն իսկ ձեռք են բերվել նրա կողմից առերևույթ հանցանքի կատարումը վկայող բավարար փաստական տվյալներ, որոնց պայմաններում քրեական պատասխանատվության ենթարկվելն անխուսափելի է: Սակայն նման քայլի չի կարելի գնալ բացառապես բոլոր դեպքերում, այլ միայն բավարար փաստական տվյալների առկայության դեպքում՝ այդ մասին կասկածյալին կամ մեղադրյալին օբյեկտիվ իրականության մասին պատկերացում կազմելու համար հնարավորություն ընձեռնելով, այլ ոչ թե խաբեության միջոցով նրա մոտ ինքնախոստովանական ցուցմունքներ տալու կամ մեղքն ընդունելու որոշում կայացնելուն հոգեբանորեն հարկադրելու նպատակով, ինչն անթույլատրելի է:

Ամեն դեպքում տեղին չէ կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննությունների ժամանակ, նրանցից խոստովանական ցուցմունք ստանալու նպատակով, քրեական գործով դեռևս ստուգման ենթակա հանգամանքների մասին հարցադրումներ կատարելը, ինչպես նաև գոյություն չունեցող ապացուցողական տվյալների մասին մտացածին տեղեկություններ տրամադրելը:

§ 4. Առերեսման առանձնահատկությունները

Առերեսում կատարելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում նպատակահարմար է այն կատարել քննության սկզբնական փուլում, երբ դեռևս կողմերը միմյանց հետ համապատասխան պայմանավորվածություններ ձեռք չեն բերել: Առերեսումից առաջ նման պայմանավորվածություն ձեռք չբերելու նպատակով պետք է հարցաքննության հրավիրելիս սահմանափակվել միայն դատավարական կարգավիճակի նշմամբ և ոչ մի դեպքում չհայտնել առերեսում կատարելու՝ վարույթն իրականացնող մարմնի մտադրության մասին, հակառակ դեպքում այն կարող է անարդյունավետ լինել: Այս դեպքում առերեսման հանկարծակիությունը կարող է տալ ցանկալի արդյունք:

Ընդունված պրակտիկայի համաձայն՝ քննիչն առաջինը հարցեր է տալիս այն անձին, որի կողմից նախկինում տրված ցուցմունքին վստահելու հիմքեր ունի, որոնք առավել արժանահավատ են և հաստատվել են նաև քրեական գործի քննությանը ձեռք բերված այլ փաստական տվյալներով: Այս հնարքի նպատակը մյուս կողմի հնարավոր ազդեցությունը կանխելն է, քանի որ բազմաթիվ դեպքերում սուտ ցուցմունք տվող անձի կողմից առաջինը վկայելու դեպքում իրական ցուցմունք տվողը, կաշկանդվածության, վախի կամ այլ պատճառներից ելնելով, համաձայնում է նրա հետ, որի արդյունքում առերեսումը տապալվում է: Առերեսման ընթացքում նպատակահարմար է կողմերի կամ նրանցից որևէ մեկի նախկինում տրված ցուցմունքները հրապարակել միայն այն դեպքում, երբ դրանց և առերեսման ընթացքում տրված ցուցմունքների միջև առկա են էական հակասություններ: Ընդ որում, առերեսման ընթացքում, ինչպես և հարցաքննությունների ընթացքում առհասարակ, կարևոր է տրված ցուցմունքներն արձանագրել հնարավորինս բառացի՝ լեզվական ոճի և բառապաշարի առանձնահատկություններով հանդերձ, ինչը կարող է ցուցմունքի արժանահավատության գնահատման և ներքին համոզմունքի ձևավորման համար ունենալ որոշիչ կամ առնվազն կարևոր նշանակություն:

Առերեսում կատարելու ընթացքում կարևոր նշանակություն ունի նաև վարույթն իրականացնող քննիչի հոգեբանական պատրաստվածությունը, դիմացինի շարժումների և դրսևորած վարքագծի ընկալումն ու վերլուծությունը: Այս համատեքստում կարևոր է ուշադրություն դարձնել ցուցմունք տվող անձանց տոնայնությանը, խոսքերի վստահությանը, յուրաքանչյուրի կողմից կատարվող շարժումներին, դիմախաղին, ինչը կարող է հնարավորություն ընձեռել հետևություններ կատարելու ցուցմունքների ճշմարտացիության կամ կեղծ լինելու վերաբերյալ:

Առերեսման ինքնուրույն փուլ կարող է դիտարկվել նաև քննիչի կողմից պլանավորված հարցադրումները հնչեցնելուց հետո կողմերին՝ միմյանց գրավոր հարցեր ուղղելու հնարավորության ընձեռումը: Սովորաբար նման դեպքերում առերեսվողները սկսում են բանավիճել միմյանց հետ, որի ընթացքում ակամա կարող են հայտնել այնպիսի կարևոր տեղեկություններ, որոնք նախկինում իրենց ցուցմունքներում չեն նշել: Այս դեպքում կարևոր է հատկապես առերեսման այդ փուլի ընթացքում վարույթն իրականացնող քննիչի կողմից «բանավեճին» հնարավորինս չմիջամտելը, ինչպես նաև ընթացքին ուշադրությամբ հետևելը՝ կրկին առանձնահատուկ ուշադրություն դարձնելով շարժումներին, դիմախաղին, տոնայնությանը: Այդ «բանավեճի» արդյունքում նույնպես հնարավոր է ստանալ նախկինում առկա հակասությունների լուծումը, ինչպես նաև ձեռք բերել նոր ապացույցներ ստանալու վերաբերյալ հուշումներ: Ամեն դեպքում կարևոր է «բանավեճի» արդյունքում առերեսվողների կողմից ներկայացված տեղեկության ամրագրումն արձանագրության մեջ, ապա այդ ուղղությամբ հնարավորինս կարճ ժամկետներում անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունների կատարումը:

§ 5. Խուզարկություններ կատարելու առանձնահատկությունները

Կոռուպցիոն հանցագործությունների քննության ընթացքում երբեմն առաջանում է խուզարկություններ կատարելու անհրաժեշտություն: Ընդ որում, նման անհրաժեշտություն կարող է առաջանալ ինչպես քրեական գործի նախաքննության սկզբնական, այնպես էլ հետագա փուլերի ընթացքում: Նման դեպքերում կարևոր նշանակություն ունի խուզարկվող օբյեկտների հստակ սահմանումը, նշված քննչական գործողության կատարման արդյունքում ակնկալվող տվյալների շրջանակը:

Որպես կանոն խուզարկությունները պետք է կատարվեն պաշտոնատար անձի աշխատասենյակում, նրա անձնական կամ ծառայողական մեքենաներում, բնակարանում, իսկ անհրաժեշտության և քրեական գործով նման տվյալների առկայության դեպքում՝ նաև նրա հետ փոխկապակցված այլ անձանց բնակարաններում: Ընդ որում, կարևոր է նաև միևնույն քրեական գործով վարույթի ընթացքում մեկից ավելի օբյեկտների խուզարկություններ կատարելու անհրաժեշտության դեպքում դրանք իրականացնել համաժամանակյա՝ այդ կերպ բացառելով ենթադրյալ հանցանք կատարած պաշտոնատար անձանց կամ նրանց ցուցումով, խնդրանքով այլ անձանց կողմից հանցագործության հետքերը, միջոցները, գործի համար կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթերը, առարկաները, այլ նյութական օբյեկտները թաքցնելու հնարավոր և հավանական փորձերը: Հետագա շահարկումներից խուսափելու նպատակով կարելի է նաև խուզարկությունների արդյունքներն ամրագրել տեսանկարահանող սարքերի, այդ թվում նաև՝ դրոնների միջոցով /խուզարկության օբյեկտի մակերեսների մեծության դեպքում առկա է որոշակի իրերի կամ առարկաների աննկատ դուրս բերման հավանականություն, ինչը կարող է ամրագրվել դրոնով տեսանկարահանում իրականացնելիս և կանխվել/:

Կախված հանցագործության կատարման եղանակից՝ կարող է նաև պաշտոնատար անձի կողմից օգտագործվող համակարգչային տեխնիկան հայտնաբերելու և առգրավելու անհրաժեշտություն առաջանալ, ինչի շնորհիվ հետագայում կարող են պարզվել մի շարք կարևոր և էական հանգամանքներ /օրինակ՝ փաստաթղթերի պատրաստման վերաբերյալ տեղեկություններ, հաղորդագրություններ, նախագծեր և այլն/: Խուզարկություններ կատարելու անհրաժեշտության դեպքում հարկավոր է ապահովել որոշակի գաղտնիության ռեժիմ, մասնավորապես, անհրաժեշտ է խուզարկություն կատարելու թույլտվություն հարուցելու միջնորդության, դատարանի կողմից միջնորդության բավարարման վերաբերյալ իրազեկել խիստ սահմանափակ շրջանակի անձանց: Համաժամանակյա խուզարկություններ կատարելիս այդպիսի միջոց կարող է ծառայել խուզարկություն կատարելու թույլտվություն տրամադրելու վերաբերյալ դատարանի որոշումը խուզարկություն կատարող անձին փակ ծրարով

տրամադրելու և խուզարկություն կատարելուց կարճ ժամանակ առաջ այն բացելու ու խուզարկվող հասցե մեկնելու վերաբերյալ ցուցումներ տալը:

Խուզարկությունների արդյունավետությունն էականորեն կարող է բարձրանալ՝ դրանց ընթացքին հետաքննության մարմնի աշխատակիցներին ընդգրկելով, ինչի մասին պարտադիր նշում պետք է կատարվի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն ներկայացնելու մասին որոշման մեջ: Հնարավորության դեպքում առավել կասկածելի օբյեկտում խուզարկությունը կարող է կատարվել ենթադրյալ հանցանք կատարած անձի մասնակցությամբ՝ ըստ անհրաժեշտության խուզարկությունը սկսելով վերջինիս անձնական խուզարկությամբ: Ենթադրյալ հանցանք կատարած անձի մասնակցությամբ կատարվող խուզարկությունները կարող են արդյունավետ լինել վերջիններիս վարքագծին հետևելով և խուզարկվող օբյեկտի առանձին հատվածների նկատմամբ ընդգծված անհանգստության նշաններ ցուցաբերելու դեպքում հենց այդ տեղամասերը խուզարկելով:

Հարկ է նշել, որ գործնականում կարող են հանդիպել դեպքեր, երբ մինչև խուզարկություն սկսելը վարույթն իրականացնող մարմնի առաջարկով ներկայացվեն առգրավման ենթակա որոշ առարկաներ: Նման դեպքերում անթույլատրելի է սահմանափակվել ներկայացված առարկաները վերցնելով կամ զգոնության թուլացմամբ ձևական բնույթ կրող խուզարկություն կատարելով: Ամեն դեպքում պետք է հաշվի առնել, որ կամովին որևէ առարկայի կամ փաստաթղթի ներկայացումը կարող է առավել կարևոր առարկան թաքցնելուն ուղղված միջոց ծառայել, ուստի անհրաժեշտ է նույնիսկ այդ դեպքերում մանրակրկիտ խուզարկություն կատարել տվյալ օբյեկտում:

Խուզարկության կատարումն իր մեջ ունի հանկարծակիության տարր և, դրանով պայմանավորված, խուզարկվող օբյեկտում քննչական գործողության սկսման պահին կարող են գտնվել տարբեր անձինք, որոնց ներկայությունը վարույթն իրականացնող մարմնինը չէր նախատեսել: Նմանատիպ դեպքերում խուզարկվող օբյեկտում գտնվող կողմնակի անձինք կարող են վտանգ ներկայացնել տվյալ քննչական գործողության միջոցով հայտնաբերման և առգրավման ենթակա իրը կամ առարկան թաքցնելու առումով, հետևաբար նպատակահարմար է նրանց արգելել դուրս գալ խուզարկվող օբյեկտից /նման որոշում քննիչը պետք է կայացնի քրեական գործի կոնկրետ փաստական հանգամանքներից և տվյալ իրադրության պայմաններից ելնելով/: Խուզարկվող օբյեկտից կողմնակի անձանց դուրս գալն արգելելը կարող է խուզարկության արդյունավետությունն ապահովելու, առարկաների հնարավոր թաքցնումը կամ դուրս հանումը կանխելու արդյունավետ միջոց հանդիսանալ:

Քրեադատավարական օրենսդրությունը քննիչին իրավունք է վերապահում խուզարկության վայրում գտնվող անձանց արգելել ոչ միայն հեռանալու խուզարկվող օբյեկտից, այլև հաղորդակցություն ունենալու միմյանց և այլ անձանց հետ՝ մինչև քննչական գործողության ավարտը (<< քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 5-րդ մաս): Արգելը կարող է լինել բանավոր, սակայն

այն կարելի է և տեղին կլինի ամրագրել խուզարկություն կատարելու վերաբերյալ կազմված արձանագրության մեջ: Ըստ վարույթն իրականացնող քննիչի հայեցողության՝ նման արգելքը կարող է ձևակերպվել նաև առանձին փաստաթղթում, որից հետո այն պետք է հրապարակվի և ստորագրվի այն անձանց կողմից, որոնց վարքագծին առնչվում է արգելքը, ապա փաստաթուղթը պետք է կցել քրեական գործին:

Փաստաթղթերի ստացման նպատակով խուզարկություններ կատարելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հարկավոր է հաշվի առնել ստացման ենթակա փաստաթղթի տեսակը և բնույթը, մասնավորապես, բանկային, նոտարական կամ ապահովագրական գաղտնիք պարունակելու հանգամանքները, որպիսի տեղեկությունների ստացման համար խուզարկությունը կամ առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա:

Գործնականում որոշակի դժվարություններ կարող են առաջանալ հատկապես ծավալուն մակերեսներով շինությունների կամ բազմասենյակ աշխատանքային գրասենյակների խուզարկություններ կատարելիս: Նման դեպքերում նպատակահարմար է տվյալ քննչական գործողության ղեկավարի կողմից կատարել խուզարկվող օբյեկտի հետազոտում, որի ընթացքում վերջինս կարող է ուսումնասիրել շինությունը կամ տարածքը, որը ենթակա է խուզարկության, ինչպես նաև անմիջականորեն ծանոթանալ խուզարկության տեղի իրավիճակին: Այդ ամենը հաշվի առնելով՝ քննիչը պետք է ճշգրտի խուզարկության պլանի վերջնական տարբերակը, որոշի որոնողական աշխատանքների հաջորդականությունը, որոշակի հատվածներ ամրակցի հետաքննության մարմնի աշխատակիցներին, ինչպես նաև որոշի տեխնիկական միջոցների կիրառման անհրաժեշտությունը (ինչպիսի տեխնիկական միջոցներ, որտեղ, ինչ հերթականությամբ): Որոնողական գործողությունների ընթացքում կարող է ընտրվել որոշակի ուղղություն, որը կբացառի որևէ տարածք առանց հետազոտման թողնելու հնարավորությունը (ժամսլաքի ուղղությամբ, տարածքի բաժանարար գծերի ուղղությամբ և այլն):

Տակտիկապես կարևոր է համարվում նաև որոնման համակարգվածությունը և համաչափությունը: Դա նախևառաջ ենթադրում է խուզարկության ընթացքում հնարավորինս ուշադրություն, դրա նպատակաուղղված իրականացում, չշեղվելու կարողություն: Հետազոտված իրերը պետք է դնել իրենց տեղը, որպեսզի շինությունը չծանրաբեռնվի և քննիչն էլ չապակողմնորոշվի, թե որ առարկաներն է հետազոտել և որոնք՝ ոչ: Խուզարկության ընթացքում վերցնելու համար առանձնացված իրերը պետք է բերել տվյալ շինության մեկ ընդհանուր տեղ՝ մանրակրկիտ հետազոտության համար: Խուզարկության ամբողջականությունն ապահովելու տեսանկյունից, նպատակահարմար է շինության գծագրի վրա նշել այն հատվածները, որոնք արդեն ենթարկվել են խուզարկության:

§ 6. Կոռուպցիոն հանցագործությունների գործերով նշանակվող փորձաքննությունները

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության ընթացքում հաճախ առաջանում է փորձաքննություններ նշանակելու անհրաժեշտություն: Այս առումով անհրաժեշտ է հստակ տարանջատել պարզաբանման ենթակա այն հարցերի շրջանակը, որոնց պատասխանների ստացումն ակնկալում է վարույթն իրականացնող մարմինը համապատասխան փորձաքննության նշանակմամբ, այդպիսով՝ նշանակվող փորձաքննության տեսակի, փորձագետների լուծմանն առաջադրվող հարցերի հստակ շրջանակի կոնկրետացման համար փաստական նախադրյալներ ստեղծելով: Փորձաքննություններ նշանակելու անհրաժեշտության դեպքում նախ և առաջ հարկավոր է հստակ սահմանել փորձաքննության առարկան, պատշաճ քննչական կամ դատավարական եղանակով այն ձեռք բերել, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ենթարկել գննության՝ մինչև փորձաքննություն նշանակելը: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության ընթացքում հաճախակի նշանակվում են դատաձեռագրաբանական, դատափաստաթղթաբանական, դատաֆինանսատնտեսագիտական /դատահաշվապահական/, դատաապրանքագիտական, դատաշինարարատեխնիկական, դատաքիմիական և այլ փորձաքննություններ:

Առանձին քրեական գործերով կարող է առաջանալ նաև այլ փորձաքննություններ նշանակելու անհրաժեշտություն, օրինակ՝ դատաեկոլոգիական, դատատեխնիկական և այլն:

§ 6.1 Դատաձեռագրաբանական և փաստաթղթաբանական փորձաքննություններ

Դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն հիմնականում առաջանում է պաշտոնեական կեղծիքի դեպքերով հարուցված քրեական գործերով: Նմանատիպ դեպքերում հիմնականում առաջանում է քրեական գործով ձեռք բերված գրավոր տեքստերը, ձեռագիր գրառումները, ինչպես նաև ստորագրությունները հետազոտելու և նույնականացնելու խնդիր: Դատաձեռագրաբանական փորձաքննության միջոցով հիմնականում լուծվում են հետևյալ հարցերը.

- ում կողմից են կատարվել փորձաքննության ներկայացված տեքստը կամ դրա առանձին հատվածները /տառային կամ թվային գրառումները/,
- միևնույն, թե տարբեր անձանց կողմից են կատարվել հետազոտվող փաստաթղթում առկա տառային կամ թվային գրառումները, ստորագրությունները,
- ում կողմից է կատարվել որոշակի անձի ստորագրությունը՝ իր, թե մեկ այլ անձի,

➤ աջ, թե ձախ ձեռքով է կատարվել հետազոտվող տեքստը կամ ստորագրությունը,

➤ արդյոք հետազոտվող տեքստը կամ ստորագրությունը չի կատարվել դիտավորյալ փոփոխված ձեռագրով,

➤ ինչ պայմաններում կամ վիճակում է կատարվել հետազոտվող տեքստը կամ ստորագրությունը /կանգնած, թե՛ նստած, սովորական պայմաններում, թե՛ հապճեպ և այլն/:

Քրեական գործի կոնկրետ հանգամանքներով կամ տիպային իրավիճակներով պայմանավորված՝ կարող է առաջանալ նաև այլ հարցեր առաջադրելու անհրաժեշտություն:

Դատաձեռագրաբանական փորձաքննության լիարժեք կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է փորձագետներին տրամադրել ինչպես հետազոտվող նյութերի ամբողջական փաթեթը, այնպես էլ հետազոտելի նմուշների հնարավորինս լայն շրջանակ: Ընդ որում, հետազոտելի նմուշները պետք է տրամադրվեն նախապես՝ չսպասելով փորձագետի կողմից այդ կապակցությամբ միջնորդություններ ներկայացնելուն: Այդ նպատակով վարույթն իրականացնող մարմինը պետք է նախապես որոշի այն անձանց շրջանակը, որոնց վերաբերյալ առկա են ողջամիտ կասկածներ խնդրո առարկա տեքստը կամ ստորագրությունը կատարելու առնչությամբ, ապա սեղմ ժամկետում ստանա այդ անձանց ձեռագրի ազատ և պայմանական ազատ նմուշներ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկի քրեադատավարական համապատասխան պահանջների պահպանմամբ ձեռագրի փորձառական նմուշներ ստանալու ուղղությամբ:

Դատափաստաթղթաբանական փորձաքննության ընթացքում հետազոտվող օբյեկտների շրջանակն էականորեն ավելի լայն է, քան դատաձեռագրաբանական փորձաքննությունների դեպքում: Պետք է նշել, որ որոշակի դեպքերում կարող է առաջանալ նաև դատաձեռագրաբանական և փաստաթղթաբանական համալիր փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն: Դատափաստաթղթաբանական փորձաքննությունների դեպքում, սովորաբար, փորձագետների կողմից հետազոտվում են տպագիր տեքստերը, կնիքների և դրոշմակնիքների դրոշմները, ջնջված կամ թույլ երևացող ձեռագիր գրառումները, գրելանյութը, մեքենագիր գրառումները, այրված կամ պատահոտված փաստաթղթերը, դրամը, արժեթղթերը և այլն:

Փաստաթղթաբանական փորձաքննությունների դեպքում նույնպես փորձագետների կողմից կիրառվում է նույնականացման մեթոդը /օրինակ՝ տպագիր գրառումը կոնկրետ տեխնիկական միջոցի օգտագործմամբ կատարված լինելը, պատահոտված փաստաթղթի՝ նախկինում մեկ ամբողջական փաստաթուղթ կազմելու հանգամանքը ստուգելու նպատակով և այլն/:

Փաստաթղթաբանական փորձաքննության միջոցով հնարավոր է պարզել փաստաթղթի կամ դրա առանձին հատվածների պատրաստման եղանակը, կատարված ձեռագիր գրառումների վաղեմությունը, ջնջված կամ թույլ արտահայտված գրառումների վերականգնումը, փաստաթղթի սկզբնական

բովանդակության փոփոխման և դրա կատարման եղանակի պարզումը: Հենց այս խնդիրների լուծման կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից կարող են առաջադրվել դատափաստաթղթաբանական փորձաքննությանն առաջադրվող բազմաթիվ հարցեր, որոնց շրջանակը խիստ յուրահատուկ է յուրաքանչյուր քրեական գործով: Այդուհանդերձ, հիմնականում փաստաթղթաբանական փորձաքննությանն առաջադրվում են հետևյալ հարցերը.

➤ հետազոտելի փաստաթղթերում առկա կնիքի կամ դրոշմակնիքի դրոշմներն ինչ եղանակով են թողնվել /կնիքի կամ դրոշմակնիքի օգտագործմամբ, համակարգչային տպագրմամբ, պատճենահանման, թե՛ մեկ այլ եղանակով/,

➤ ներկայացված փաստաթղթում առկա կնիքի կամ դրոշմակնիքի դրոշմները թողնվել են փորձաքննությանը ներկայացված, թե մեկ այլ կնիքից կամ դրոշմակնիքից,

➤ հետազոտելի փաստաթղթերում առկա գրառումները ենթարկվել են արդյոք փոփոխությունների, թե՛ ոչ /ջնջման, կերագծման, այլ գրառումներով վերածածկման/,

➤ վերականգնել ջնջված կամ թույլ արտահայտված տեքստերի նախնական բովանդակությունը,

➤ փաստաթղթերում առկա տպագիր գրառումներն ինչ եղանակով են կատարվել՝ տպարանային, պատճենահանման, համակարգչային տպիչով, թե մեկ այլ եղանակով /առկայության դեպքում կարող է փորձագետին տրամադրվել նաև համապատասխան տեխնիկական միջոց՝ համակարգիչ, համակարգչային շիթային կամ լազերային տպիչ և այլն, որոնց համեմատական հետազոտությամբ փորձագետը կարող է առավել ստույգ պատասխանել հարցին, թե արդյոք ներկայացված փաստաթուղթը պատրաստվել է հենց այդ տեխնիկական միջոցի գործադրմամբ, թե՛ ոչ/,

➤ փաստաթղթում առկա ձեռագիր գրառումները կատարվել են միևնույն, թե տարբեր գրելագործիքներով,

➤ վերականգնել պատռված փաստաթղթերի նախնական տեքստը և դրանում առկա նախնական գրառումները,

➤ պարզել այրված փաստաթղթերում առկա գրառումների բովանդակությունը /կարևոր է այրված փաստաթղթերի առկայության դեպքում դրանց անվնաս ամրագրումն ու ստացումը՝ հետագա հետազոտություններ կատարելու համար, քննչական պրակտիկայում, սովորաբար, այրված փաստաթղթերը ստացվում են մանրակրկիտ լուսանկարահանման կամ կոսմետիկ միջոցների կիրառմամբ /այրված փաստաթղթից շուրջ 50-60 սմ հեռավորությամբ մազերի ֆիքսման համար նախատեսված հեղուկի օդակաթիլային զանգվածի կիրառմամբ, որի արդյունքում կարճ ժամանակում այրված փաստաթուղթն ամբողջական կերպով ֆիքսվում է և հնարավոր է այն զգուշությամբ տեղաշարժել/,

➤ փաստաթղթում ինչ հաջորդականությամբ են կատարվել տպագիր կամ ձեռագիր գրառումները, ապա կնիքի կամ դրոշմակնիքի դրոշմը,

➤ դրամը կամ արժեթղթերը կեղծ են, թե՛ ոչ, ինչ եղանակով են դրանք պատրաստված և արդյոք համապատասխանում են ՀՀ պետական ստանդարտներին, թե՛ ոչ:

§ 6.2 Դատաֆինանսատնտեսագիտական /հաշվապահական/ փորձաքննություն

Դատաֆինանսատնտեսագիտական փորձաքննության կատարման անհրաժեշտությունն առաջանում է առավելապես հափշտակությունների դեպքերով հարուցված քրեական գործերով, երբ ձեռք բերված փաստական տվյալները կասկած են հարուցում կազմակերպությունների ֆինանսական գործունեության օրինականության նկատմամբ: Դատահաշվապահական փորձաքննություններ նշանակելուն կարող է նախորդել համապատասխան ոլորտի հատուկ գիտելիքների տիրապետող անձանց կամ պետական տարբեր կազմակերպություններին մասնագիտական ստուգում կամ վերստուգում նշանակելու գործընթացը: Ամեն դեպքում ֆինանսական չարաշահումների վերաբերյալ քրեական գործեր քննելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հաշվապահական փորձաքննություն նշանակելու հեռանկարը և նախաքննության ընթացքում ձեռք բերել այն բոլոր հաշվապահական փաստաթղթերը, որոնք կարող են ապահովել նշանակվելիք փորձաքննության լիարժեքությունը:

Մինչև առգրավված փաստաթղթերը փորձագետներին տրամադրելը վարույթն իրականացնող քննիչը կարող է նաև կատարել դրանց գննում:

Հաշվապահական փորձաքննության ընթացքում հիմնականում հետազոտման են ենթակա հետևյալ փաստաթղթերը.

➤ տվյալ կազմակերպության հաշվապահական հաշվառման նախնական և միջանկյալ փաստաթղթերը,

➤ տվյալ կազմակերպության բյուջեին /վարչական, ֆոնդային, պահուստային և այլն/ վերաբերող փաստաթղթերը՝ բյուջեի կառուցվածքի, բյուջետային մուտքերի, ծախսերի տնտեսագիտական դասակարգման և այլնի վերաբերյալ,

➤ կազմակերպության ծախսերի տարեկան նախահաշիվը և այն հաստատելու կապակցությամբ ընդունված իրավական ակտերը,

➤ կազմակերպության գնումների պլանը /առկայության դեպքում/ և այն հաստատելու կապակցությամբ ընդունված այլ իրավական ակտերը,

➤ կազմակերպության հաստիքացուցակը, տարիֆավորման ցուցակները,

➤ ֆինանսական տեղեկագրերը, վճարային տեղեկագրերը, հաշվապահական հաշվառման վարման մատյանները,

➤ եռամսյակային, կիսամյակին և տարեկան հաշվետվությունները,

➤ աուդիտորական կամ այլ կազմակերպությունների կողմից իրականացված ստուգման ակտերը /առկայության դեպքում/,

➤ կազմակերպության կանոնադրությունը, հիմնադիրների ժողովի արձանագրությունները և կազմակերպության կառավարման մարմինների ձևավորման վերաբերյալ այլ իրավական ակտերը,

➤ կազմակերպության ղեկավար և ենթադրյալ հանցանք կատարած անձանց գործառույթային պարտականությունները սահմանող իրավական ակտերը,

➤ հատկացված սուբսիդիոն կամ դրամաշնորհային գումարների ստացման փաստը հավաստող, ինչպես նաև դրանք կազմակերպության բյուջե մուտքագրելու վերաբերյալ փաստաթղթերը,

➤ սուբսիդիոն կամ դրամաշնորհային գումարներ հատկացնելու վերաբերյալ պայմանագրերը /սովորաբար նման պայմանագրերում ամրագրվում են հատկացվող գումարի տրամադրման անհրաժեշտությունը, ծախսային ուղղությունները, դրանց նպատակային օգտագործման համար սահմանված վերահսկողական մեխանիզմները և այլ էական նշանակություն ունեցող հարցեր/,

➤ կազմակերպության կողմից ըստ գնումների պլանի կնքված պայմանագրերը և դրանց կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությունները, դուրս գրված հարկային հաշիվները և այլ փաստաթղթերը:

Դատահաշվապահական փորձաքննության ընթացքում փորձագետներին առաջադրվող հարցերի շրջանակը հիմնականում ընդգրկում է թվարկված փաստաթղթերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ լրացված լինելու, միմյանց համապատասխանելու և հնարավոր չարաշահումների ու խախտումների հայտնաբերմանն ուղղված հարցադրումները: Ըստ այդմ, դատաֆինանսատնտեսագիտական կամ հաշվապահական փորձաքննությամբ կարող են պարզաբանվել հետևյալ հարցերը.

➤ կազմակերպության բյուջետային մուտքերը և ելքերը համապատասխանում են արդյոք հաշվապահական հաշվառման տվյալներին, թե՛ ոչ,

➤ բյուջետային մուտքերը և ելքերը կատարվել են արդյոք հաշվապահական հաշվառման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա ինչ բնույթի խախտումներ են թույլ տրվել,

➤ բյուջետային պակասորդ կամ հավելորդ առկա է, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա ինչ պատճառով է այն գոյացել /հավելուրդն արդյոք կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակների համար է օգտագործվել/,

➤ տրամադրված սուբսիդիայով և դրամաշնորհներով հատկացված, ինչպես նաև սեփական եկամտի գումարների ստացման և օգտագործման գործընթացներում հաշվապահական հաշվառման կարգի խախտումներ թույլ տրվել են, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա կոնկրետ ում կողմից, ինչպիսի խախտումներ են թույլ տրվել և ինչ հետևանքներ են դրանք առաջացրել,

➤ ստացված գումարների հետ կապված ֆինանսատնտեսական գործունեության անալիտիկ և սինթետիկ հաշվառումները տարվել են արդյոք ստուգվող ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման գործող ակտերի

պահանջներին համապատասխան, թե՛ ոչ, սինթետիկ հաշվառման տվյալները համապատասխանում են արդյոք անալիտիկ հաշվառման տվյալներին, թե՛ ոչ,

➤ նախորդ տարիներին կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի կատարման արդյունքում՝ 01.01.01 թվականի դրությամբ, կազմակերպության բանկային հաշվի մնացորդը /գանձապետական հաշվի մնացորդը/ ինչ ուղղությամբ է ծախսվել, համապատասխանում է արդյոք նշված ծախսը ՀՀ օրենսդրությանը և կազմակերպության կանոնադրությանը,

➤ համապատասխանում են արդյոք կազմակերպության եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները միմյանց, ինչպես նաև կազմակերպության բյուջետային մուտքերին ու ելքերին,

➤ հաշվապահական փաստաթղթերով հիմնավորված է արդյոք այս կամ այն հաշվապահական միջոցառման /հաշվարկ, վերահաշվարկ, գերավճար, թերավճար և այլն/ իրականացման անհրաժեշտությունը, թե՛ ոչ,

➤ տվյալ կազմակերպության աշխատակիցների աշխատավարձերը և/կամ այլ վճարները ճիշտ հաշվարկվել և վճարվել են, թե՛ ոչ, առկա են արդյոք համապատասխան հաշվարկավճարային փաստաթղթեր, թե՛ ոչ:

§ 6.3 Դատաշինարարատեխնիկական փորձաքննություն

Փորձաքննության այս տեսակի անհրաժեշտությունը հիմնականում առաջանում է կատարված շինարարական աշխատանքներում հավելագրումներ կատարելու կամ այլ եղանակով չարաշահումներ կատարելու վերաբերյալ քրեական գործի նախաքննությամբ փաստական տվյալներ ձեռք բերելու համար:

Շինարարատեխնիկական փորձաքննության միջոցով վարույթն իրականացնող մարմինը պարզում է շենքերի, շինությունների կառուցման, վերակառուցման, քանդման, վերանորոգման աշխատանքների համապատասխանությունը նախագծանախահաշվային, տեխնիկանորմատիվային փաստաթղթերի պահանջներին: Փորձաքննության իրականացման ընթացքում, բացի առկա շինարարական աշխատանքների ուսումնասիրությունից, փորձագետները հենվում են ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվ ակտերի, ստանդարտների, տեղեկագրերի, հրահանգների վրա, ռատի, ինչպես դատաֆինանսատնտեսագիտական, այնպես էլ դատաշինարարատեխնիկական փորձաքննությունների դեպքում կարևոր նշանակություն ունի այն փաստաթղթերի շրջանակի որոշումը և առգրավումը կամ դատավարական եղանակով ստացումը, որը կարող է ապահովել փորձաքննության լիարժեք կատարումը:

Հարկ է նշել, որ շինարարատեխնիկական փորձաքննության հետազոտման օբյեկտներ կարող են հանդիսանալ.

- շինարարական օբյեկտների տեղակայման վայրերը,
- շինարարական օբյեկտներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը,

- շինարարական սարքավորումները և/կամ շինանյութերը,
- հատուկ փաստաթղթաշրջանառությունը:

Շինարարատեխնիկական փորձաքննության կատարման համար առավելապես անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

- նախագծանախահաշվային փաստաթղթերը/նախագիծ, նախահաշիվ-ծավալաթերթ/,
- նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման վերաբերյալ կնքված պայմանագրերը,
- առկայության դեպքում՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությանը վերաբերող փաստաթղթերը,
- շինարարության կատարման որակի տեխնիկական և հեղինակային հսկողության կատարման վերաբերյալ կնքված պայմանագրերը,
- շինարարական աշխատանքների կատարման կապալի պայմանագիրը /առկայության դեպքում՝ ամբողջ մրցութային փաթեթը/,
- շինարարության/քանդման/ թույլտվությունը,
- հողատարածքի, դրա նպատակային և գործառնական նշանակությանը և դրանց փոփոխություններին վերաբերող փաստաթղթերը,
- շինարարական աշխատանքների միջանկյալ և հիմնական կատարողական ակտերը, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունները, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը, դուրս գրված հարկային հաշիվները,
- շինարարության վարման մատյանը,
- առկայության դեպքում՝ ծածկված աշխատանքների հանձնման-ընդունման և փորձարկման ակտերը,
- առկայության դեպքում՝ շինարարության ավարտական փուլում կազմված համադրման ակտերը և այլն:

Թեև յուրաքանչյուր քրեական վարույթի առանձնահատկություններով պայմանավորված կարող է խիստ անհատական լինել նաև շինարարատեխնիկական փորձաքննությամբ առաջադրվող հարցերի շրջանակը, սակայն կարելի է նախանշել այն հիմնական հարցադրումները, որոնք, սովորաբար, ներկայացվում են փորձագետների պարզաբանմանը: Ընդ որում, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ քրեական գործերի նախաքննության ընթացքում հիմնականում առաջանում է դատաշինարարատեխնիկական և ապրանքագիտական համալիր փորձաքննությունների նշանակման անհրաժեշտություն, ուստի հարցադրումների հնարավոր ձևակերպումները տրվում են այդ հանգամանքը հաշվի առնելով:

Այսպիսով, շինարարատեխնիկական /և ապրանքագիտական համալիր/ փորձաքննությանը սովորաբար առաջադրվում են հետևյալ հարցերը.

- շինարարական /վերանորոգման/ աշխատանքների համար կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերը, կատարողական և ընդունման-

հանձնման փաստաթղթերը կազմվել են արդյոք ՀՀ քաղաքաշինության բնագավառի օրենսդրությանը համապատասխան, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա ինչպիսի թերություններ կան և ինչ հետևանքներ են դրանք առաջացրել,

➤ շինարարական /վերանորոգման/ աշխատանքների համար պատվիրատուի հետ կնքված պայմանագրերով և կազմված փաստաթղթերով ինչ ծավալի և արժեքի աշխատանքներ են կատարվել կապալառու կազմակերպությունների կողմից, համապատասխանում են դրանք կնքված պայմանագրերի պահանջներին, ծավալին, որակին և արժեքին, նշված աշխատանքների ընթացքում խախտումներ թույլ տրվել են թե՛ ոչ, եթե՛ այո, ապա ում կողմից, ինչպիսի խախտումներ են թույլ տրվել և ինչ հետևանքներ են դրանք առաջացրել,

➤ արդյոք կատարված շինաշխատանքների հավելագրումներ չեն կատարվել, եթե՛ այո, ապա ում կողմից և ինչ չափի,

➤ մինչև ճարտարահատակագծային առաջադրանքի կամ շինթույլտվության տրամադրումը շինարարության տեղամասում շինարարական աշխատանքներ կատարվել են, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա ինչ ծավալի և բնույթի /նախապատրաստական, բետոնացման, մետաղյա կոնստրուկցիաների տեղադրման և այլն/,

➤ շինարարությունը սկսելու պահին տեխնիկական փաստաթղթերը բավարար եղել են, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա ինչ փաստաթղթեր չեն կազմվել,

➤ պատվիրատուի կողմից կապալառու շինարարական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերով նախատեսված աշխատանքներն ամբողջ ծավալով են կատարվել, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա ինչ ծավալի և գումարի աշխատանք չի կատարվել, չկատարված աշխատանքների դիմաց վճարումներ կատարվել են, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա՝ որքան:

➤ կապալառու շինարարական կազմակերպությունների /անհատ ձեռնարկատերերի, շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների կամ անհատների/ կողմից պայմանագրով չնախատեսված աշխատանքներ կատարվել են, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա ինչ ծավալի և գումարի, կատարված աշխատանքների համար վերջիններս վճարվել են, թե՛ ոչ,

➤ պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում և ավարտին հսկողությունը՝ պատվիրատուի, նախագծող և հեղինակային հսկողություն, ինչպես նաև տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունների կողմից, պատշաճ կատարվել են, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա կոնկրետ ում թերացումների և չարաշահումների արդյունքն են արձանագրված խախտումները,

➤ շինարարության ավարտման փաստագրման ակտը համապատասխանում է արդյոք շինարարական օբյեկտի ներկայիս բնութագրին, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա ինչ անհամապատասխանություններ են առկա:

Պետք է նշել նաև, որ կոռուպցիոն բնույթի առանձին հանցագործությունների գործերով նշանակվող դատաշինարարատեխնիկական փորձաքննությունների շրջանակներում փորձագետների լուծմանը կարող են առաջադրվել նաև այլ հարցադրումներ, որոնց պարզաբանումը կարող է էական նշանակություն ունենալ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտման համար:

§ 6.4 Կոռուպցիոն հանցագործությունների գործերով նշանակվող այլ փորձաքննություններ

Վերը թվարկված փորձաքննություններից բացի, կոռուպցիոն բնույթի առանձին հանցագործությունների քննության ընթացքում կարող է առաջանալ նաև այլ փորձաքննություններ նշանակելու անհրաժեշտություն: Օրինակ՝ կաշառք տալու կամ ստանալու դեպքերով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում հնարավոր է առաջանա դատաքիմիական փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն՝ նախապես մշակված կաշառքի առարկա հանդիսացող դրամը /արժեթղթերը/ կասկածյալի մոտից հայտնաբերելու դեպքում հատուկ ներկանյութի առկայությունը վերջինիս հագուստների, մարմնի /հիմնականում ձեռքերի/ մակերեսներին հայտնաբերելու նպատակով:

Կաշառքի առարկայի բնույթից և ծավալներից ու որակական հատկանիշներից ելնելով՝ հնարավոր է առաջանա նաև մատնադրոշմային փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն: Նման բոլոր դեպքերում անհրաժեշտ է խստագույնս պահպանել հետազոտման համար նմուշներ ստանալու, ինչպես նաև կաշառքի առարկայի ստացման, անհատական հատկանիշների ամրագրման, փոխարինման բացառման քրեադատավարական ընթացակարգերը, ընդ որում, պետք է հաշվի առնել կաշառքի առարկա հանդիսացող դրամի կամ այլ իրերի հետ բժշկական ձեռնոցներով աշխատելու անհրաժեշտությունը:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով քրեական գործեր քննելիս հնարավոր է նաև դատահամակարգչատեխնիկական և/կամ դատատեսաձայնագրային փորձաքննությունների նշանակման անհրաժեշտություն: Դատահամակարգչատեխնիկական փորձաքննությունների կատարման անհրաժեշտությունը հիմնականում առաջանում է քրեական գործի համար նշանակություն ունեցող տարբեր տեղեկությունների հայտնաբերման, այդ թվում՝ ջնջված կամ համակարգչի, բջջային սարքերի, թվային տեսագրիչների հիշողության տարբեր պնակներում պահպանված, համակարգչի կամ բջջային սարքերի միջոցով համացանցային տիրույթում տեղեկության առաքման, ստացման, փոփոխման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն ստանալու դեպքերում: Ներկա զարգացումների դեպքում հաշվապահական հաշվառումն առավելապես վարվում է համակարգչային տարբեր ծրագրային ապահովումների

միջոցով, ուստի խիստ արդիական է նաև համակարգչատեխնիկական և հաշվապահական համալիր փորձաքննությունների նշանակումը, որի հիմնական խնդիրը համակարգչից կամ բջջային սարքավորումներից քննության համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունների կամ փաստաթղթերի հայտնաբերումը, վերականգնումն ու դրանք դատահաշվապահական բնագավառի փորձագետներին տրամադրումն է:

Անհարկի դատահամակարգչատեխնիկական փորձաքննությունների կատարումից խուսափելու համար հնարավոր է նաև համակարգիչների կամ բջջային սարքավորումների զննումը համապատասխան մասնագետի և ծրագրային ապահովումներով համակարգչային տեխնիկայի գործադրմամբ, ինչը թույլ կտա նախնական պատկերացում կազմելու տվյալ սարքավորումներով առկա տեղեկության բնույթի, ծավալի և քրեական գործի համար պիտանիության վերաբերյալ: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ համակարգչային և բջջային սարքավորումների զննումն ու փորձագետներին տրամադրումը պետք է կատարվի դատարանի թույլտվության առկայության դեպքում:

Տեսաձայնագրառման փորձաքննությունները կատարվում են հիմնականում տեսագրման կամ ձայնագրման լազերային սկավառկաների կամ տեսաերիզների, ձայներիզների առկայության դեպքում, որոնք էլ հենց փորձաքննության հետազոտման օբյեկտներն են: Տվյալ փորձաքննությամբ հիմնականում պարզվում են տեսաձայնագրառման պայմանները, միջոցները, մոնտաժման հետքերի առկայությունը կամ բացակայությունը, տեսագրված պատկերի, տեսագրությունների պայմանները և այլն: Տեսաձայնագրառման փորձաքննությունների շրջանակներում կատարվում են նաև ձայնի և խոսքի հետազոտություններ՝ իրականացվում է անձի նույնացում՝ ըստ իր ձայնի /կարևոր նշանակություն կարող է ունենալ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների տարբեր գործերով, որոնցով պատշաճ դատավարական ընթացակարգերի պահպանմամբ իրականացվել են հեռախոսային խոսակցությունների վերահսկում, արտաքին կամ ներքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումները/:

Տեսաձայնագրառման փորձաքննությունների միջոցով հնարավոր է նաև կատարել ձայնագրությունում առկա բանավոր խոսքի վերծանում, ինչպես նաև պարզել ձայնագրության բնօրինակ հանդիսանալու հանգամանքը, տեսաձայնագրառում կատարող սարքերի և սարքավորումների տեսակները և անհատականացնող մյուս հատկանիշները: Նմանատիպ փորձաքննությունների միջոցով հնարավոր է նաև կոնկրետ տեսապատկերի առանձնացում, որակի լավացում և հետազոտություն, որն առանձին դեպքերում կարող է որոշիչ ազդեցություն ունենալ քրեական գործի քննության համար:

Տեսաձայնագրառման փորձաքննության առանձին ենթատեսակ է ֆոտոդիմանկարային փորձաքննությունը, որի միջոցով հնարավոր է իրականացնել ֆոտոլուսանկարի կամ տեսապատկերի որակի լավացում, դրանց վրա պատկերված օբյեկտների և սուբյեկտների երկրաչափական չափսերի

վերլուծություն, ինչպես նաև ավտոմատացված դիմանկարային նույնացում /քննչական պրակտիկան ցույց է տալիս, որ ՀՀ-ում իրականացվող նմանատիպ փորձաքննությունների մեծամասնության դեպքում դիմանկարային նույնականացում գրեթե չի կատարվում, ուստի լուսանկարի կամ տեսապատկերի որակի լավացումից և հստակեցումից հետո հնարավոր է դրանում պատկերված օբյեկտների կամ անձանց նույնացում կատարել դրանց վերաբերյալ տեղեկության տիրապետող անձի/անձանց/ մասնակցությամբ զննություն կատարելու միջոցով/:

Հարկ է նշել, որ կոոպացիոն բնույթի հանցագործությունների գործերով մինչդատական քրեական վարույթի ընթացքում, դրա առանձնահատկություններով պայմանավորված, հնարավոր է առաջանա նաև այլ փորձաքննությունների կատարման անհրաժեշտություն, որոնց մասին սույն ուղեցույցում չի նշվել: Տվյալ դեպքում պետք է, առաջին հերթին, հստակ որոշել քրեական գործով որևէ տեսակի փորձաքննության կատարմամբ պարզաբանման ենթակա հարցերի շրջանակը, ապա, ըստ այդմ, պարզել նշանակվելիք փորձաքննության տեսակը /օրինակ՝ քրեական գործերով կարող է առաջանալ դատաէկոլոգիական, հողագիտական և այլ փորձաքննություններ նշանակելու անհրաժեշտություն/: